ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

№ 12 (642)
15 ՀՈՒԼԻՍԻ
2025թ.

Մերօրյա Կապան քաղաքը ձևավորած ձեռնարկությունը՝

«Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերությունը, մարզկենտրոնի զարգացման գրավական

ISSN 1829-3468

Kapan
Mining and
Processing
Company

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերություն

«Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության կառավարման խորհրդի նախագահ Սասուն Ավետիսյանի ուղերձը Հանքագործի և մետալուրգի օրվա առթիվ

Հարգելի գործընկերներ Կապանի և Լիճքվազի լեռնահանքային համալիրների և «Էս ընդ Էյ Մայնինգ» ընկերության սիրելի աշխատակիցներ

Լեռնամետալուրգիական ոլորտի երկարամյա նվիրյալներ

Շնորհավորում եմ Հանքագործի և մետալուրգի մասնագիտական տոնի առթիվ:

Այս օրը ոչ միայն մեր բնագավառի ու հարակից ոլորտների, այլև (ընդհանրապես) մեր երկրի օրացույցի ամենակարևոր տոներից է:

Հայաստանի նորանկախ պետության ձևավորման փուլում՝ նավթագազային ռեսուրսների բացակայության պայմաններում, հատկապես լեռնամետալուրգիան դարձավ այն ճյուղը, որն անվերապահորեն ստանձնեց տնտեսությունը սնող հիմնական զարկերակի կայունացնող դերը, որն այսօր էլ հաջողությամբ իրականացնում է՝ նպաստելով մեր երկրի զարգացմանն ու նրա պաշտպանունակության բարձրացմանը:

Ոլորտում ներգրավված և բնագավառի հետ կապված են հանրապետության հազարավոր մարդիկ, ովքեր իրենց գիտելիքներով, հմտություններով ու նվիրվածությամբ ապահովում են տնտեսության՝ համակարգաստեղծ այս ուղղության կայուն զարգացումը:

Այունիքում հանքագործի ու մետալուրգի մասնագիտությունը և ոլորտը՝ ավանդաբար, ամենապահանջվածն ու կարևորն են եղել:

Մարդիկ գիտակցում են մարզում ժողովրդագրական հավասարակշռությունը պահպանելու ռազմավարական անհրաժեշտությունը, զգում մայրաքաղաքից հեռու համայնքում բարեկեցիկ ապրելու հարմարավետությունն ու տեսնում երկիրը զարգացնելու՝ հանքարդյունաբերության ընձեռած հնարավորությունը:

Աշխարհում՝ տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ, շարունակում է բարձրանալ հանքահումքային ռեսուրսների նշանակությունը՝ նորանոր հնարավորություններ ստեղծելով ոլորտում ուղղակի և անուղղակի ներգրավված բոլոր կողմերի համար:

Ուրախ եմ արձանագրել, որ մեր ընկերությունների լեռնահանքային համալիրն արդեն այնպիսի դինամիկ զարգացող միավոր է, որտեղ տեխնոլոգիական արդիականացման գործընթացը շարունակական է դարձել, ուր փորձում

ենք տարիների աշխատանքային ավանդույթները համատեղել ժամանակակից տեխնոլոգիական նորարարությունների հետ:

Մեր ամենօրյա օրակարգում են աշխատանքի պաշտպանության, բնապահպանության ու սոցիալական ծրագրերը: Վերջինիս խոսուն օրինակն ընկերությունում օրերս ներդրված բժշկական ապահովագրության համակարգն է:

Նորաստեղծ ուսումնական կենտրոնի շնորհիվ սկսել ենք վերահսկել նաև աշխատակիցների հաստիքային կոմպետենտության մակարդակը, որը թույլ է տալիս համակարգային մոտեցմամբ ստեղծել մասնագիտական առաջխաղացման և աշխատանքային պայմանների բարելավման նախապայմաններն ու ներուժը:

Հանքագործի և մետալուրգի օրվա կապակցությամբ երախտագիտությունս եմ հայտնում հանքարդյունաբերության ոլորտի բոլոր աշխատակիցներին՝ կամքի, ներդրած ջանքի և նվիրումի համար:

Թող ձեռքբերումները լինեն շարունակական, աշխատանքը՝ գնահատված ու բավականություն պատճառող:

Ձեզ և ձեր ընտանիքներին մաղթում եմ սեր, առողջություն ու բարեկեցություն:

«Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության տնօրենությունը

Սասուն Սլավիկի Ավետիսյան
«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ խորհրդի նախագահ

Դավիթ Ռուբիկի Դանիելյան
«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Հարություն Սուրենի Թամազյան
Գլխավոր ճարտարագետ

Առնակ Վլադիմիրի Բաբայան
Գլխավոր ճարտարագետի տեղակալ՝ լեռնային գծով

Արթուր Սերգեյի Վերդյան
Տեխնիկական տնօրենի տեղակալ, գլխավոր մեքենագետ

Վահան Գագիկի Թադևոսյան
Գլխավոր տնօրենի տեղակալ, անվտանգության ծառ. պետ



Հովհաննես Ավետիքի Հարությունյան
Գլխավոր տնօրենի տեղակալ կայուն զարգացման գծով

Սուրեն Գալուստի Շաքարյան
Գլխավոր տնօրենի տեղակալ վարչական գծով

Արթուր Համլետի Աբրահամյան
Գլխավոր տնօրենի տեղակալ կոմերցիոն գծով

Լևոն Վազգենի Կիրակոսյան
Գլխավոր տնօրենի տեղակալ հարստացման գծով

Արարատ Յուրիկի Ղարդյան
Որակի և տեխնիկական հսկողության ծառայության պետ

Հայրապետ Միշայի Միրզոյան
Տեխնիկական տնօրենի տեղակալ, գլխավոր էներգագետ

Էդուարդ Քաջիկի Հարությունյան
Գլխավոր տնօրենի տեղակալ՝ սոցիալական և տեղեկատվական հարցերով

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ

Հանքագործի և մետալուրգի օրվա նախօրեին հարցազրույց ունեցանք «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Դանիելյանի հետ:

Կապանի գլխավոր և մայր ձեռնարկությունը՝ զարգացման ու արդիականացման ճանապարհով

– Պարոն Դանիելյան, «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնում նշանակվել եք վերջերս, և այդ կարգավիճակում առաջին անգամ ենք հանդիպում: Ուստի և՝ ընդունեք մեր շնորհավորանքն ու բարեմաղթանքները պատասխանատու այդ գործում: Համաձայնվեք՝ զբաղեցրած բարձր և պատասխանատու պաշտոնով նոր դեմք եք հանքարդյունաբերության ոլորտում, Սյունիքի մարզի տնտեսական վերնախավում: Ասել է թե՝ ողջամիտ կլիներ, որ զրույցը սկսեինք Ձեր կենսագրությանը կամ անցած ճանապարհին (համառոտ) ծանոթանալով:

– Շնորհակալ եմ շնորհավորանքի և մեր ընկերության գործունեությամբ հետաքրքրվելու համար:

Ծնվել եմ Կապանում՝ 1978 թվականին, ավարտել եմ Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1995 թ. ընդունվել եմ Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարան: 1999 թվականին «Ընդերքաբանական ճարտարագիտություն» մասնագիտությամբ ավարտել եմ բակալավրիատը: Նույն թվականին զորակոչվել եմ պարտադիր զինծառայության, զորացրվել եմ 2001 թվականին: 2002 թվականին տեղափոխվել եմ Երևան՝ աշխատել ադամանդագործության ոլորտում մինչև 2004 թվականը, այնուհետև՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում՝ մինչև 2018 թվականը: 2019 թ. աշխատել եմ «Վանդ-ՍԱ» ՍՊԸ-ում՝ տնօրենի օգնական՝ կոմերցիոն գծով: 2020 թվականից՝ «Ապառաժ» ՍՊԸ-ում՝ կոմերցիոն գծով փոխտնօրեն, այնուհետև՝ 2023 թվականից, Կապանի լեռնահարստացման կոմբինատի կոմերցիոն տնօրենի օգնական, 2025-ի տարեսկզբից՝ գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդական, ապրիլի 15-ից՝ գլխավոր տնօրեն:

– Ընկերության բաժնետոմսերը 2023 թ. ձեռք բերեց հայաստանյան «Գոլդ Մայնինգ Քամփնի» ՍՊ ընկերությունը: Կուզենայինք համառոտ տեղեկություններ ստանալ առ այն, թե մոտ երկու տարվա ընթացքում արմատական կամ սկզբունքային ի՞նչ փոփոխություններ կատարվեցին և ուշագրավ ի՞նչ հաջողություններ գրանցվեցին ընկերությունում:

– Կոմբինատը մասնավորեցումից հետո շատ սեփականատերեր է փոխել: Սեփականատիրոջից սեփականատեր անցման փուլերը տևում էին մինչև հինգ տարի: Այդքան փոքրացել էր նաև կոմբինատի պլանավորման հորիզոնը. ավելի երկարաժամկետ հեռանկարի վերաբերող զարգացումները դուրս էին մնացել սեփականատերերի տեսադաշտից: Սեփականատիրոջ վերջին փոփոխությունը սկզբունքորեն տարբերվում է նախորդներից. այս անգամ սեփականատիրոջ կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունն է, ավելի կոնկրետ՝ ՀՀ Սյունիքի մարզը: Կոմբինատի գործունեության պլանավորման հորիզոնն այլևս հաշվարկվում է տասնամյակների կտրվածքով՝ երկարաժամկետ հեռանկարում տնտեսական զարգացումն ու շահութաբերությունը համադրելով Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական կյանքում մասնակցության, սեփականատիրոջ բարի համբավի և գործարար հեղինակության հետ: Կոմբինատի նոր գործելակերպի առաջին ազդակը մեր բիզնես-հանրությանը՝ պարտքերի մեջ խրված տնտեսավարողի կերպարից ձերբազատվելն էր: Կոմբինատը հիմնական մասով լուծել է նախորդ սեփականատիրոջից ժառանգած պարտքային բեռի հարցը և շատ ավելի պարտաճանաչ գործընկեր է դարձել մատակարարների ու այլ համագործակցողների համար: Շինարարական, վերանորոգման, կահավորման և այլ աշխատանքներ են իրականացվել՝ աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ, քանի որ նոր սեփականատիրոջ համար մարդիկ պարզապես աշխատուժ չեն: Մեր բոլոր աշխատողներին՝ գործնականում, ճանաչում ենք անձամբ, գիտենք՝ ով ինչ ճանապարհ է անցել, գիտենք նրանց ընտանիքի անդամներին: Սա սկզբունքորեն այլ իրավիճակ է, էապես տարբերվում է այն մոտեցումից, երբ կապանցին որպես տեղաբնակ աշխատուժ էր սեփականատիրոջ համար:

Բարեփոխումներ իրականացվել են բոլոր ոլորտներում՝ թե մեխանիկական, թե տեխնոլոգիական, թե աշխատանքի անվտանգության... Մասնավորապես՝ ծայրահեղ ռիսկային և գործնականում առանց հուսալիություն պահանջող նվազագույն պաշարի էր գործում կոմբինատի էներգասնուցման համակարգը: Այդ

ուղղությամբ մեր ներդրումները, կարելի է ասել, ոչ միայն շարունակականության ապահովման, այլ ուղղակի վթարականխիչ նշանակություն ունեին: Դա վերը նկարագրված կարճաժամկետ պլանավորման ամենավառ դրսևորումն էր, երբ տևական ժամանակ անհրաժեշտ նվազագույն կապիտալ ծախսերը չէին արվել: Ուշադրության կենտրոնում նաև կոմպրեսորային տնտեսության արդիականացումը և ընդլայնումն է, որը կիրականացվի ընթացիկ տարում, այն կունենա ավելի փոքր էներգածախս, ավելի բարձր արդյունավետություն:

– Ի՞նչ է իրենից այսօր ներկայացնում «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերությունը՝ տնտեսական տեսակետից՝ հանքաքարի արդյունահանման և մշակման ծավալներ, թողարկող արտադրանք ու կարևոր այլ ցուցանիշներ:

– Կոմբինատը տարեկան վերամշակում է մոտ 600 հազար տոննա հանքաքար՝ արտադրելով խտանյութեր, որոնք պարունակում են ոսկի, պղինձ, ցինկ և արծաթ: Արդյունքներն ավելի չափելի են դառնում համեմատության մեջ: 2023 թ. սեպտեմբերի դրությամբ (այդ տարում) արտադրվել է 9704 տոննա ոսկու խտանյութ, 2024 թ. սեպտեմբերի դրությամբ այդ թիվը դարձել է 13396 տոննա, այսինքն՝ մեկ տարվա ընթացքում 38 տոկոս աճ: Ցինկի խտանյութի վերաբերյալ. 2023 թ. ունեցել ենք 8175 տոննա խտանյութ, 2024-ին՝ 10675 տոննա, 30 տոկոս աճ: Ընդհանուր առմամբ՝ խտանյութի արտադրության 34 տոկոս աճ ենք ունեցել:

– Աշխարհաքաղաքական փոփոխվող և անորոշ վիճակում մեր հանրապետության տնտեսվարողները բախվում են բազմաթիվ խնդիրների: Կարողանո՞ւմ եք հաղթահարել այդ դժվարությունները և մատակարարումների ու առաքումների հարցում անխափանություն ապահովել:

– Դա մեզ ոչ միայն չի կաշկանդում, այլև դրդում է ավելի հզորանալու: Կապանցիներին լավ հայտնի փաստ է, որ կոմբինատը նախագծվել և կառուցվել է ոչ թե 600 հազար տ/տ հանքաքարի վերամշակման արտադրողականությամբ, այլ՝ մեկ միլիոն տոննա: Այսինքն՝ կոմբինատն այսօր աշխատում է իր դրվածքային հզորության ընդամենը 60 տոկոսով: Այդ ազատ արտադրական հզորության ծանրաբեռնումը ներկայումս մեր առաջնահերթ խնդիրներից է: Մենք համագործակցում ենք Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրը շահագործող «Լիճքվազ» ՓԲ ընկերության հետ, և ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում վերամշակում ենք նաև այդ հանքավայրից արդյունահանվող հանքաքարը: Իրատեսական հնարավորություն ունենք ավելացնելու Շահումյանի հանքավայրից արդյունահանման ծավալները: Այդ ամենն իրականացնելու և լիարժեք արտադրողականությամբ գործելու համար անհրաժեշտ է, որ հանվի կոմբինատի գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքներով կազմված եզրակացության մեջ ամրագրված տարեկան 600 հազար տ հանքաքարի վերամշակման սահմանափակումը: Մեր պատվերով կատարվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր գնահատում, կազմվել է Գեղանուշի պոչամբարի անվտանգության բարձրացման և շահագործման ժամկետի ավելացման նախագիծ, որոնք առաջիկայում ներկայացվելու են փորձաքննության: Ամեն ինչ արվելու է կապանցիների լայն ներգրավմամբ, կապանցիների հետ երկխոսության և նրանց ձայնը հաշվի առնելու պայմաններում:

– Հանքարդյունաբերության ոլորտում վճռորոշ նշանակություն ունեն մետաղների գները միջազգային շուկայում: Որքանո՞վ են նպաստավոր մետաղների գները ներկայումս:

– Մետաղների բորսայում գների աճը կամ նվազումն ուղղակիորեն անդրադառնում են հանքարդյունաբերական բոլոր ձեռնարկությունների վրա: Դա մեր արտադրանքի շուկայի և մեր տնտեսական ցուցանիշների տեսանկյունից վճռորոշ գործոնն է: 2023 թվականից ի վեր արձանագրվել է բորսայական գների էական աճ, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի մեծ հաջողությամբ կյանքի կոչել մեր ծրագրերը, լուծել ընկերության առջև ծառացած խնդիրները: Սակայն ցանկացած գնի բարձրացման պայմաններում ոլորտի ձեռնարկությունները պարտավոր են հիշել, որ ոչինչ չի երաշխավորում այդ գների տևական կայունությունը: Հետևաբար՝ միշտ պետք է ունենալ կայունության բարձիկ, որը թույլ կտա կանխատեսումներից դուրս իրավիճակներում հայտնվելիս պահպանել աշխատատեղերն ու չհայտնվել անդունդի եզրին:

– Ընկերության դերակատարությունը մեր պետական բյուջեի համալրման գործում: Փորձեք համեմատություններ անել ըստ տարիների վճարված հարկերի միջև:

– Կոմբինատը կայուն տեղ ունի ՀՀ խոշոր հարկատուների հրապարակվող ցանկերում: Նոր սեփականատիրոջ կառավարման արդյունքները՝ նաև այդ ցանկերում կոմբինատի տեղի բարելավման առումով բավականին զգալի են: Այսպես՝ 2023 թ. հարկային հաշվարկները կազմել են 1 միլիարդ 600 միլիոն դրամ, 2024-ին՝ 7 միլիարդ 888 միլիոն դրամ: Միևնույն ժամանակ՝ ունենք աշխատավարձի բարձրացում՝ 11 տոկոսով:

– Վերջին՝ առնվազն երկու տասնամյակում Այունիքի հանքարդյունաբերության ոլորտում խնդիր էր դրված՝ անհրաժեշտ նյութերի, պահեստամասերի մի մասը (հնարավորության դեպքում) պատրաստել կամ ձեռք բերել տեղի տնտեսվարողների օգնությամբ: Ի՞նչ վիճակ է այդ տեսակետից ընկերությունում:

– Բնականաբար, կոմբինատը չի կարող ոչ ռացիոնալ զոհաբերությունների գնալ իր սպառած ապրանքների գնի և որակի չափանիշների հաշվին որևէ արտադրողի նախապատվություն տալու առումով: Սակայն տեղական արտադրողների հետ համագործակցության համատեքստում ձգտում ենք դրսևորել առավելագույն ճկունություն, որոշ դեպքերում ժամանակավորապես հանդուրժում բաներ, որոնք ներկրման դեպքում չէինք հանդուրժի, մեղմացնում մեր մոտեցումները: Բայց դա միայն ժամանակավոր: Նոր–նոր ասպարեզ եկող տնտեսվարողներ կան, որոնք խոստումնալից արդյունքներ են ցույց տալիս և հուսադրում, որ կկարողանան որոշ ներկրման տողեր մեր մատակարարումների ցուցակում փոխարինել տեղական ձեռքբերումներով: Տեղական արտադրողը նաև առավելություն ունի լոգիստիկ ծախսերի, մաքսային ու այլ տեսանկյուններից: Օրինակ, աշխատանքային արտահագուստը ներկայում ձեռք ենք բերում Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայից և Հայաստանի կույրերի միավորման Կապանի ուսումնաարտադրական միավորումից: Կոմբինատը բաց է համագործակցության համար և հետևողական է՝ իր ձեռք բերած ապրանքների որակական չափորոշիչների հարցում:

– Կապան քաղաքի երկրորդ վերածնունդը պայմանավորված է եղել լեռնահարստացման կոմբինատով, ասել է՝ քաղաքաստեղծ ձեռնարկություն է Կապանի ԼՀԿ-ն: Այսօր էլ համայնքի բնականոն զարգացումը պայմանավորված է կոմբինատով: Ինչպե՞ս եք գնահատում կոմբինատ–համայնք համագործակցությունը: Ուշագրավ ի՞նչ ծրագրեր եք իրականացրել համայնքում և ի՞նչ մտադրություններ ունեք առաջիկա ժամանակաշրջանի համար:

– Ճիշտ եք նկատում՝ կոմբինատը քաղաքաստեղծ ձեռնարկություն է: Իսկ դա նշանակում է, որ ավանդաբար ծանրակշիռ մասնակցություն ենք ունեցել և ունենում համայնքային խնդիրների լուծմանը: Ասել է թե՝ ինչպես կարևորում ենք կոմբինատի զարգացումը, այնպես էլ համայնքի զարգացումը: Համագործակցության պայմանագրեր կան: Համայնքին աջակցելու քաղաքականությունն իրականացվում է հատկապես «Ավետիս» բարեգործական հիմնադրամի միջոցով: 2024 թվականին համայնքին տրամադրել ենք 120-130 մլն դրամ, իսկ երբ պայմանագրերը թարմացվել են, այդ թիվն ընթացիկ տարում կկազմի 180 միլիոն դրամ: Միևնույն ժամանակ հովանավորել ենք

«Զանգեզուր» ֆուտբոլային ակումբին, Սյունիքի շախմատի ֆեդերացիային: Առաջիկայում հուշագիր կստորագրենք Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի հետ: Այդ հանգամանքը մեզ համար շատ անհրաժեշտ է, քանի որ կարևորում ենք կադրերի պատրաստումը: Կապանի մասնաճյուղի շրջանավարտների զգալի մասը մեր ընկերության վաղվա աշխատակիցն է: Առիթ է ևս մեկ անգամ ասելու՝ այդ կրթօջախի ուսանողը կարող է լիահույս լինել, որ վաղն ապահովված կլինի իր մասնագիտությանը համապատասխան աշխատանքով: Տասնյակ օրինակներ ունենք, որ մասնաճյուղի շրջանավարտներն արդեն իսկ աշխատում են մեր ընկերությունում: Հատուկ ուշադրություն ենք դարձնում պոչամբարին առավել մոտ տեղակայված Գեղանուշ գյուղին. անվճար տրանսպորտ ենք հատկացրել, գյուղի մանկապարտեզի սաները և դպրոցի աշակերտները նույնպես ուշադրության կենտրոնում են, ջանում ենք օգտակար լինել ամեն ինչով:

– Կապանը, խոստովանենք, բնապահպանական տեսակետից ռիսկային գոտի է շատ վաղուց... Ներկայիս սեփականատիրոջ և ընկերության ղեկավարության քաղաքականությունը բնապահպանության ոլորտում, շրջակա միջավայրը հնարավորինս անաղարտ պահելու ուղղությամբ: Բնապահպանական ռիսկերը և դրանք կառավարելուն, մեղմելուն միտված քայլերը:

– Ընկերության բնապահպանական գործունեության առաջնահերթություններից են արտանետումների նվազեցումը և թափոնների կրճատումը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրումը և ներդրումը, ջերմոցային գազերի արտանետումների վերահսկումը: Իր գործունեության մեջ առաջնորդվելով շրջակա միջավայրի վրա հավանական բացասական ազդեցության նվազեցմանը միտված միջոցառումների կազմակերպմամբ՝ ձեռնարկության բնապահպանական բաժինն իրականացնում է ամենօրյա մշտադիտարկում և վերահսկողություն:

«Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերությունում դեռևս 2018 թվականից ներդրված է ու արդյունավետ գործում է բնապահպանական մենեջմենթի համակարգը, որը ISO 14000:2015 միջազգային ստանդարտի պահանջներով հավատարմագրված է միջազգային «Բյուրո Վերիտաս» ընկերության կողմից: Այն ապահովում է բնապահպանական ոլորտի շարունակական բարելավումը՝ ՀՀ բնապահպանական ոլորտի օրենսդրական պահանջների իրացմամբ, ինչպես նաև միջազգային պահանջների համապատասխանելիության ապահովմամբ:

– Ընկերության ամենագլխավոր և ամենաթանկ կապիտալը, որքան հասկանում ենք, մարդկային ռեսուրսն է: Մյուս կողմից՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերությունը մարզկենտրոնի գլխավոր գործատուն է: Որքա՞ն աշխատող ունի ընկերությունը ներկայումս: Աշխատատեղերի ավելացման կամ նվազման հեռանկարը: Ի՞նչ սկզբունքով կամ կարգով է կատարվում նոր աշխատողների ընդունելությունը, մասնագետների տեղական ռեսուրսը բավարարո՞ւմ է ընկերության պահանջները, թե՞ ստիպված եք լինում նաև կադրեր հրավիրել դրսից:

– Այս պահին կոմբինատում աշխատում է երկու հազար աշխատող՝ հինգ հարյուրով ավելի, քան 2023 թ. սեպտեմբերին: Եթե երկու հազարը բազմապատկենք երեքով կամ չորսով (նկատի ունեմ ընտանիքի անդամների միջին թիվը), կնշանակի ութ հազար մարդու կարիքներ ենք հոգում: Այս ամենով հանդերձ՝ ունենք նեղ մասնագետների կարիք: Նաև հավելեմ, որ աշխատանքով ապահովել ենք Արցախից բռնագաղթված մեր հայրենակիցներից շատերին, ովքեր կարճ ժամանակամիջոցում ինտեգրվեցին ընկերության գործունեությանը: Իսկ ընդհանրապես դրսից եկած մասնագետները շատ չեն, շեշտը դրվում է նախևառաջ տեղի մասնագետների վրա: Այնուամենայնիվ, որոշ նեղ մասնագետների կարիք ունենք, ուստի և ստիպված ենք լինում դրսից հրավիրել: Նեղ մասնագետների հարցը լուծում ենք նաև մեր կարող կադրերի վերապատրաստման միջոցով:

– Գաղտնիք չէ, որ Սյունիքը վերջին տարիներին հայտնվել է աշխարհաքաղաքական իրադարձությունների, ուժային կենտրոնների ուշադրության կենտրոնում: Արդյո՞ք այս պայմաններում Սյունիքը ռիսկային չէ ներդրումների համար, թե՞...

– Չեմ կարծում, որ Հայաստանի Սյունիքի մարզը ռիսկային է ներդրումների առումով կամ որևէ չափով ավելի ռիսկային է, քան մնացած մարզերը: Ընկերության սեփականատիրոջ մոտեցումն այն է, որ եթե նույնիսկ որևէ ռիսկ կա էլ, այն չեզոքացնելու լավագույն ճանապարհը հենց ներդրումն ու տնտեսական հզորացումն է: Անվտանգության մյուս պարամետրերն ածանցյալ են և կապահովվեն, եթե տնտեսապես հզորացնենք մեր երկիրը: Ռիսկերը մեղմելու մեր ճանապարհը կոնկրետ գործելն է, համայնքը շենացնելը, նոր աշխատատեղեր ստեղծելը, տարածաշրջանն ավելի գրավիչ դարձնելը, արտադրությունը վերազինելը, ինչով և զբաղվում ենք:

– Հանքագործների աշխատանքային պայմանները ստորգետնյա հանքախորշերում... Նախորդ տարիներին քանիցս խնդիրներ են ծագել օդափոխության, անվտանգության և մի շարք այլ հարցերի առումով, իսկ հիմա՞...

– Անվտանգ աշխատանքի պայմանների ապահովումը չափազանց կարևոր հարց է մեզ համար: Դա վերաբերում է նաև ստորգետնյա հանքախորշին, որտեղ արմատական փոփոխություններ ենք կատարել:

Օդափոխությանն ու էներգամատակարմանն առնչվող բազմաթիվ հարցերի լուծում է տրվել: Մասնավորապես ապահովված է օդափոխիչ սարքավորումների անխափան աշխատանքը: Յուրաքանչյուր հերթափոխից առաջ, համապատասխան սարքերի միջոցով, ստուգվում է փոշու առկայությունն օդում, որից հետո միայն հերթափոխը մտնում է հանքախորշ: Միևնույն ժամանակ՝ ստորգետնյա ջրցան մեքենաները կասեցնում են փոշու տարածումն ու ազդեցությունը:

– Քանի որ արծարծեցինք հանքագործների աշխատանքային պայմանների թեման, խոսենք նաև նրանց սոցիալական վիճակի, սոցիալական ու իրավական պաշտպանվածության մասին:

– Աշխատավարձերի բարձրացման մասին նշեցի: «Սյունյաց լեռնագործներ» արհեստակցական միությունն էլ աջակցում է բոլոր աշխատակիցներին: Հանքագործը կարող է իրեն հուզող յուրաքանչյուր հարցով՝ ընդհուպ կենցաղային, դիմել արհեստակցական միությանը և օպերատիվ արձագանք ստանալ:

Հուլիսի 1-ից ընկերությունում ներդրել ենք ապահովագրական համակարգ, որից կօգտվեն ոչ միայն աշխատակիցները, այլև նրանց ընտանիքի անդամները:

– Հանքարդյունաբերությունը, որքան հայտնի է, համաշխարհային տնտեսության մեջ ամենաարագ զարգացող ոլորտներից է: Կարողանո՞ւմ եք քայլել հանքարդյունաբերության ոլորտի առաջավոր փորձին ու միտումներին համաչափ: Նկատի ունենք և՛ տեխնիկայի արդիականացումը, և՛ կադրերի վերապատրաստումը, և՛ համաշխարհային փորձին հաղորդակցվելը:

– Մեզ համար առաջնային են մասնագետ կադրերի պատրաստումը և վերապատրաստումը: Որոշ մասնագիտությամբ աշխատողների համար անց է կացվում ատեստավորում: Ընկերությունում դրվածքն այսպիսին է՝ եթե աշխատողը ցանկություն ունի պաշտոնի առաջխաղացում ունենալ, ապա կարող է դրան հասնել իր բարձրորակ աշխատանքով, մասնագիտական վարպետության բարձրացմամբ: Ձգտում ենք մասնակցել միջազգային տարբեր էքսպոների և լավագույն փորձը ներդնել մեր ընկերությունում, իսկ այդ ամենի համար անհրաժեշտ են վերապատրաստված աշխատակիցներ:

– «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ–ն հանրա-

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ

Կապանի լեռնահարստացման կոմբինատի մերօրյա ընթացքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ համարեցինք (Հանքագործի և մետալուրգի տոնի նախօրեին) զրուցել նաև ընկերության գլխավոր ճարտարագետ Հարություն Թամազյանի հետ:



Կապանի լեռնահարստացման կոմբինատը եղել և մնում է Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության դպրոցը

– Պարոն Թամազյան, առաջին անգամ եք ներկայանում մեր լսարանին, ուստի և կուզենայինք իմանալ՝ ի՞նչ ճանապարհ եք անցել մինչև ընկերության գլխավոր ճարտարագետ նշանակվելը:

– Ծնվել եմ Լոռու մարզի Շնող գյուղում՝ ծառայողի ընտանիքում: Բուհն ավարտելուց հետո 2005 թ. հանքարդյունաբերական ոլորտում գործունեությունս սկսել եմ իբրև մարկշեյդեր, երեք տարի հետո արդեն եղել եմ գլխավոր մարկշեյդերի պաշտոնակատար, երկար տարիներ գլխավոր մարկշեյդեր եղել Ախթալայի լեռնահարստացման կոմբինատում: 2016 թվականից եղել եմ հանքի պետ, արտադրության պետ, գլխավոր տնօրենի տեղակալ՝ լեռնարդյունաբերության գծով: 2020 թ. տեղափոխվել եմ «Լիճք-վազ-թեյ» ՓԲ ընկերություն՝ գլխավոր ինժեներ: 2023 թվականից զուգահեռ աշխատել եմ Կապանի լեռնահարստացման կոմբինատում՝ նախ կայուն զարգացման պատասխանատու, այնուհետև՝ գլխավոր ճարտարագետ, այս պահին նաև տեխնիկական տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունն եմ կատարում:

– Գլխավոր ինժեներ, գլխավոր ճարտարագետ, տեխնիկական տնօրեն... Տարբեր ժամանակներում նման և այլ անվամբ այդ պաշտոնը զբաղեցնող անձնավորությունն ի՞նչ գործառույթներ ունի Կապանի լեռնահարստացման կոմբինատում:

– Առաջին գործառույթը ձեռնարկության գիտատեխնիկական քաղաքականության ռազմավարության մշակումն է՝ ինչպիսին կլինի ընկերության վաղվա օրը և տասը տարվա կտրվածքով ինչ ենք անելու, ինչ սպասելիքներ ունենք, ինչ ռիսկեր կան, ուր ենք գնում, ինչ ուղի ենք բռնել, ինչ վերազինումներ են անհրաժեշտ: Բացի տեխնիկական պարտականությունից՝ գլխավոր ճարտարագետն օժանդակում է ընկերության մասնագիտական անձնակազմի համալրմանը, վերապատրաստմանը, կազմակերպում է թրեյնինգներ, ինժեներական անձնակազմի կառավարում է իրականացնում: Եթե անձնակազմ չստեղծես, ինքն իրեն չի ստեղծվելու: Պիտի համալրես, սովորեցնես, եթե անհրաժեշտ է՝ ուղարկես ֆորումի կամ դրսից հրավիրես մասնագետներ՝ տեղում դասընթացներ: Ամենակարևորը՝ ինչպես ասեցի, ռազմավարությունն է: Ինչպիսին կլինի ընկերությունը, ինչպիսի՞ ռազմավարություն ունենանք, ինչպիսի՞ զարգացման ուղի ենք ընտրելու: Ինչպիսի՞ զարգացման ուղի ենք ընտրելու, ինչպիսի՞ ներդրումներ ենք անելու, ինչպիսի՞ ներդրումներ ենք անելու, ինչպիսի՞ ներդրումներ ենք ան

թացներ կազմակերպելու համար: Ըստ իս՝ գրագետ ինժեներն ամենամեծ ռեսուրսն է: Գլխավոր ճարտարագետը կազմակերպում է նաև գրագետ փաստաթղթաշրջանառություն: Նրա գործառույթները ներառում են նոր տեխնիկայի ներդրումն արտադրության մեջ: Նաև վերլուծություն ես անում, սեփական սխալներն ես փորձում հասկանալ ու շտկել, ասված խոսք է՝ յուրաքանչյուրն իր սխալի վրա է սովորում:

– Երբ հետադարձ հայացք ենք ձգում, տեսնում ենք, որ Կապանի լեռնահարստացման կոմբինատում առավել շատ մտահոգություններ եղել են ստորգետնյա հանքում…

– Աշխատանքի անվտանգությունից սկսենք, որին շատ-շատ ուշադրություն ենք դարձնում, ինչի շնորհիվ ունենք արդյունք՝ 2023 թվականի սեպտեմբերից հետո չունենք ոչ մի արտադրական վթար: Վերջին դեպքը եղել է 2023 թ. հունիս ամսին, որից հետո այլևս զրոյական ցուցանիշ ենք կարողացել ապահովել, ինչն աշխատանքի անվտանգության հանդեպ լուրջ վերաբերմունքի արդյունք է: Աշխատանքային անվտանգության միջոցների հարցում ոչ մի խնայողություն չենք անում, ամեն ինչով ապահովում ենք մարդկանց, օդի տվիչներ բոլորի մոտ կան, դա թանկ հաճույք է, բայց ոչ մի բանի վրա խնայողություն չենք անում: Բոլորը գիտեն, որ իրենք վտանգավոր գոտում են: Օդափոխության հետ կապված անց են կացվել լրացուցիչ փորվածքներ: Նախկինում՝ հանքի շահագործման տարիներին, ունեցել ենք X միավոր տեխնիկա հանքում, հիմա ունենք 2X միավոր տեխնիկա, կրկնակի չափով տեխնիկական պարկն ավելացել է, իսկ օդափոխության համակարգն արդիականացվել է: Ներկայումս նաև ծրագրեր են իրականացվում հանքում գերժամանակակից տվիչներ դնելու ուղղությամբ, ինչի շնորհիվ դիսպետչերական կետում երևալու է՝ հանքի որ մասում ինչ վիճակ է, որտեղ կա օդափոխության խնդիր և այլն: Օդափոխության կայանները լրիվ վերազինվել են:

Մենք ժառանգել էինք մի վիճակ, որ ամբողջ օրը խնդիրներ էին ծագում… Եթե մաքուր օդը հանք չես մղում, քառասուն րոպե հետո շնչելու օդ չի լինում: Այսօր ունենք մի վիճակ, որ հանքում անց է կացվել ազդարարման համակարգերի Wi-Fi ցանց, գլոբալ ներդրումներ են կատարվել, հանքում 100 մետր քայլելով՝ Wi-Fi գոտու մեջ ես մտնում, ամբողջ հանքում կապի ազդարարման համակարգը ռեալ աշխատում է: Աշխատողն իր հանքախորշում, եթե խնդիր է ունենում, երկու րոպե քայլելուց հետո կարող է իր ղեկավարին անմիջապես տեղյակ պահել, որ խնդիր է ծագել: Ոչ թե աշխատողը չգիտի՝ ում գտնի, ինչպես գտնի, հանքը շատ մեծ է, մինչև 400 կիլոմետր փորվածք կա, մի շաբաթ է անհրաժեշտ, որ մեքենայով ողջ հանքով շրջես: Այս հանքավայրը երրորդ կարգի բարդություն ունի: Ամսական երեք կիլոմետր փորվածք ենք իրականացնում: 30 տարի հանքավայրն աշխատում է, ամսական երեք կիլոմետր… Ամեն ինչ արվում է, որ հսկողությունն ուժեղացվի և՛ անվտանգության, և՛ օդափոխության առումներով: Լուրջ ներդրումներ ենք արել, պահեստային օդափոխիչներ կան, ամեն ինչով վերազինված վիճակ է ստորգետնյա հանքում:

– Հարստացուցիչ ֆաբրիկան, ինչպես ընդունված է ասել, հանքարդյունաբերական ձեռնարկության բաբախող սիրտն է: Փորձեք համառոտ ներկայացնել հարստացուցիչ ֆաբրիկայի նորօրյա վիճակը:

– Պատրաստվում ենք ֆաբրիկան վերազինել: Ասենք՝ նոր աղաց չենք տեղադրում, հին աղացները վերականգնում և վերագործարկում ենք, որ կարողանանք արտադրողականությունը հասցնել ռեալ չափերի: Ամբողջությամբ ավտոմատացնում ենք կոմբինատը, որ անգամ արհեստական բանականությունը ներդրվի մեր տեխնոլոգիաների մեջ, այսինքն՝ ինքը որոշակի կառավարում իրականացնի: Դա չի նշանակում, որ մարդկային գործոնը հետին պլան պիտի մղվի: Ապագա ինժեներների համար սերնդափոխություն ենք կազմակերպում, քանի որ կոմբինատում 2008-2012 թվականներին է սերնդափոխություն կատարվել, կարծում եմ՝ ժամանակն է սերնդափոխության. ոչ թե հներին տուն ուղարկել, այլ նոր սերունդ աճեցնել: Ընկերության ինժեներական անձնակազմի միջին տարիքը 40-50 է, գոհացուցիչ է, բայց երբ հետ ենք նայում՝ ռեսուրս չկա:

– Ուղեկցող մետաղների թվում է, որքանով տեղյակ ենք, կադմիումը: Կարողանո՞ւմ եք դա և մյուս ուղեկցող մետաղները կորզել, թե՞ նման հնարավորությունները բացակայում են առայժմ:

– Այս պահին գործընթացը նախապատրաստական փուլում է, վերջերս Բրազիլիայում մասնակցել ենք համաշխարհային ֆորումի, որ հասկանանք հանքագործության զարգացման համաշխարհային միտումները, դրանց տեխնոլոգիաները, իրենց հետ համագործակցության ուղիները: Ներկա պահին պայմանավորվածություններ ունենք՝ անցկացնելու խորհրդակցություններ, որ հասկանանք՝ մեր հանքաքարից հնարավո՞ր է ուղեկցող մետաղներ կորզել: Այժմ դիտարկվում է կադմիում կորզելու հնարավորությունը: Երբ վերլուծում ենք, այսօրվա դրությամբ, միայն կադմիումի ստացման վրա արժե տեխնոլոգիական ծախսեր անել, մյուս ուղեկցող մետաղները որպես հանքաքար դիտարկելն առայժմ անիմաստ է:

– Դեռևս 19-րդ դարում, երբ այս տարածաշրջանում թափ էր առնում հանքարդյունաբերությունը, ստեղծվում էին նաև ձուլարաններ: Հիմա էլ, ժամանակ առ ժամանակ, նման ծրագրերի մասին խոսակցություններ ենք լսում: Նախ՝ ունե՞ք ծրագիր՝ արդյունահանվող մետաղները ոչ թե խտանյութի տեսքով իրացնելու, այլ խտանյութն այստեղ մշակելու ու վերջնական տեսքի բերելու ուղղությամբ: Եվ արդյո՞ք դա տեխնոլոգիապես շահավետ ձեռնարկում կլինի:

– Տեխնոլոգիապես անհնարին ոչինչ չկա, սակայն տնտեսական և շահութաբերության առումներով պիտի արդարացված լինեն: Առնվազն 120 հազար տոննա խտանյութ պիտի ունենաս, որ ձուլարանի մասին մտածես: Կոմբինատն առայժմ այդ ծավալը չունի: Միջազգային շուկայում մետաղների գներն ինչքան պիտի աճեն, որ մտածես մետաղաձուլարան ունենալու մասին: Ինչն այս պահին ոչ շահութաբեր է: Նույնիսկ Ալավերդու ձուլարանը խորհրդային տարիներին աշխատել է պետական լրավճարով: Հայաստանում արտադրվող խտանյութը չի բավարարել, որ այդ ձուլարանն ինքնածախսածածկումով աշխատի: Որպես ռազմավարական օբյեկտ, որպես այդպիսին պահվել է: Չինաստանում՝ շատ դեպքերում, նման ձուլարաններին պետական լրավճար է տրվում, որպեսզի անհրաժեշտ ռազմավարական մետաղն արտադրվի, իսկ Հայաստանում իրական չէ այդ մասին մտածելը:

– Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի մասին… Ի՞նչ է իրենից ներկայացնում հանքավայրն այսօր:

– Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը հանքերակային տիպի իր բարդությամբ, ինչպես նշեցի, երրորդ աստիճան ունի՝ իր ոչ սինխրոն տարածվածության, փոփոխականության պատճառով: Հանքավայրը վերջին անգամ վերագնահատման է ներկայացվել 2008 թվականին, հաստատվել է 80 հանքերակ: Ներկայումս գտնվում ենք վերահաշվարկի փուլում, ներկայացվել է շուրջ 280 երակ, այսինքն՝ հանքավայրում ամենօրյա շահագործման և լրացուցիչ հետախուզման աշխատանքներ ենք իրականացնում: Ամսական միջինը կատարում ենք վեց հազար մետր շահագործողական հետախուզում, հազար մետր լրացուցիչ հետախուզում, որպեսզի մեր ռեսուրսների բազան անընդհատ ավելացվի, նորը հայտնաբերվի, քանի որ մետաղների գները բարձրանում են: Այդ հետախուզության արդյունքում ունենք մի իրավիճակ, որ բավականին մեծ ռեսուրս է ավելանում: Ինչպես նաև ֆաբրիկայի վերազինումից հետո, երբ որոշակի չափով հանքաքարի քանակն ավելանա,

ինքնարժեքն իջնի, մենք կարող ենք հանքաքարի ամենացածր պարունակությունները դիտարկել, ու հանքավայրի կյանքը, եթե այժմ դիտվում է 15-20 տարի, հասնի մինչև 35-50 տարի: Այս ամենն ասում եմ այսօրվա հայտնի բազայի հիման վրա, իսկ հանքավայրը նաև թևերով է շարունակվում տարածվել դեպի ներքև, բավականին մեծ հեռանկար ունի: Մինչև այս պահը լեռնահետախուզական աշխատանքներ ենք իրականացրել արևելյան թևում, ունենք հաստատված որոշակի պաշարներ: Նախատեսում ենք այս տարվա վերջին արևմտյան թևում լեռնահետախուզումը շարունակել, ինքը բավականին խորքային է՝ մոտ 600 մետր, փոքր-ինչ ծախսատար է տեխնոլոգիապես, բարդ, բայց ուզում ենք այնպես անել, որ այս հանքավայրի կյանքն առանց ընդհատումների լինի, և ստեղծենք մեծ ռեսուրս մեզ ու սերունդների համար:

– Ինժեներական կադրերի որակը՝ հաշվի առնելով հանգամանքը, որ նման ձեռնարկության հաջողությունը մեծամասամբ կախված է նրանցից:

– 2023 թվականին Կապանի լեռնահարստացման կոմբինատում գործունեությունը սկսելուց հետո մեր թիմը տեխնիկական բոլոր բաժիններում մոտ 60 տոկոսով ավելացրել է մասնագետների թիվը: Ճարտարագիտական համալսարանի միջին որակական գնահատականից (ՄՈԳ) բարձր բազմաթիվ ուսանողներին ընդունել ենք աշխատանքի, որպեսզի ռեսուրս ստեղծենք: Ոչ միայն սկսնակ կադրեր ենք հավաքել, այլև հանրապետությունում հայտնի մասնագետներ, որպեսզի ինժեներատեխնիկական բազան ուժեղացնենք: Նոր հավաքված կադրերի վերապատրաստման համար ստեղծել ենք ուսումնակրթական կենտրոն (ղեկավար՝ Հրանտ Արմաղանյան): 25-30 ժամանոց դասընթացներ են անցկացվում, որից հետո անց է կացվում քննություն՝ գրավոր և բանավոր, կարևոր է լինում ղեկավարի կարծիքը: Քննություն հանձնողների ստացած գնահատականի հիման վրա է նրանց աշխատավարձն ու պաշտոնը որոշվում: Մարդիկ կան, ովքեր տասը տարի աշխատել, բայց չեն կայացել, երիտասարդների ճանապարհն են փակում:

Երիտասարդների շրջանում ամենօրյա աշխատանք է տարվում նրանց կրթական մակարդակը բարելավելու համար: Նաև դրսից օնլայն դասընթացներ են անցկացվում, դրանք միջազգային ծրագրեր են: Բացի դրանից երիտասարդ մասնագետ ենք ուղարկել Սանկտ Պետերբուրգի ճարտարագիտական համալսարան՝ համաժողովներին մասնակցելու, որ ժամանակակից տեխնոլոգիական լուծումներից պատկերացում կազմի: Նաև ասեմ, որ կոմբինատը հուշագիր է ստորագրել Երևանի պետհամալսարանի երկրաբանական ֆակուլտետի հետ, ընկերությունն ուսանողների համար հատկացրել է անվճար լիցենզիաներ, լսարան է առանձնացրել, որտեղ համալսարանի ուսանողներն ընկերության հաշվին ծանոթանում են ծրագրերին: Նման ծրագրերի միջոցով մեր անձնակազմի հետ ամենօրյա աշխատանք ենք տանում, որ պատրաստ լինեն համաշխարհային մարտահրավերներին:

Կապանի լեռնահարստացման կոմբինատը միշտ էլ եղել է Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության դպրոցը, այստեղի կադրերը որտեղ էլ գնացել են՝ իրենց լավագույն կողմերով են դրսևորել: Մենք էլ ձգտում ենք, որ ավանդույթը պահպանվի:

– Ենթադրում ենք, որ տեխնոլոգիական առումով փոփոխությունները նույնպես ուղեկցում են ընկերությանը: Ի՞նչ նորություններ ունեք այդ առումով և առաջին հերթին ստորգետնյա հանքում ու ֆաբրիկայում:

– Հանքում նորարարություններ բավականին ներդրվել են՝ սկսած ամրակապման տեսակներից: Լիճքվազից բերեցինք և ներդրեցինք տորկրետբետոնյա ամրակապումը, որ արտադրության մեջ մասսայական չէր իրականացվում: Զուգահեռաբար կիրառում ենք գունտաբետոնով հետլցման եղանակը. անվտանգության հենասյուները բետոնով ենք լցնում, որ փլուզվելու հավանականությունը նվազեցվի: Ծախսատար է, բայց անվտանգության լուրջ երաշխիքներ է ստեղծում, ինչքան էլ ասես հանքն անվտանգ է, բայց քարի տակ կանգնելն իրոք վտանգավոր է: Հանքում կառավարման մոտեցումն է փոխվել. նախկինում հանքը մի տեղամաս էր դիտարկվում: Բայց քանի որ շատ է ընդլայնվել, մասնատել ենք, ինչպես երկրաբանական վերահսկողությանը մի թիմ էր սպասարկում, հիմա բաժանվել է չորս տեղամասի: Նաև հանքում օգտագործվող մարկշեյդերական գործիքներն ենք ժամանակա-

կից դարձրել, որ մեր աշխատանքների ճշգրտությունն ապահովենք:

– Բնապահպանությանն առնչվող ևս երկու հարց: Արտադրական և կենցաղային թափոնների օգտագործման պրակտիկան: Կոմբինատում միշտ էլ խնդրահարույց է եղել կեղտաջրերի չեզոքացման և դեպի ջրային օբյեկտներ դրանց արտանետումը բացառելու հարցերը: Որքանո՞վ են կարգավորված այդ հարցերը:

– Կոմբինատում կա երեք տեսակի ջուր՝ ֆաբրիկայի պոչամբարի ջուր, վարչական շենքի սովորական կոյուղային և հանքի ստորերկրյա ջրերը: Պոչամբարի ջուրը փակ շրջանառությամբ է գործում, այդ ջուրը մտնում է կոմբինատ, նորից մաքրվելով վերադարձվում է շրջանառության, այսինքն՝ հանքաբարի վերամշակման ջրի արտահոսք չի լինում: Բնականաբար, ջրի մի մասը գոլորշիանում է, բացը լրացվում է տեխնիկական ջրով: Վարչական շենքի ջրերը միանում են քաղաքային կոյուղուն: Հանքի ջրերը կուտակվում են դրանց համար նախատեսված ջրավազաններում, որտեղ ենթարկվում են մեխանիկական մաքրման, ընդ որում՝ կրկնակի: Ինչ վերաբերում է արտադրական և կենցաղային թափոններին, դրանք արտադրական տարածքից դուրս են բերվում առանձին, կուտակվում են դրանց համար առանձնացված պահեստներում և ըստ պետական լիկվիդացիայի ընթացակարգի՝ համապատասխան լիցենզավորված կազմակերպությունները տեղափոխում են վերամշակման:

– Կուզենայինք ծանոթանալ ընկերության պոչային տնտեսության վիճակին: Գործող պոչամբարում տարիներ շարունակ ընդլայնման, պատվարի ամրակայման աշխատանքներ են իրականացվել: Կարո՞ղ ենք փաստել՝ գործող պոչամբարը կամ Գեղանուշի պոչամբարը բավարարում է ընկերության կարիքները, թե՞ այն ընդլայնելու կամ նորը կառուցելու խնդիր ունեք:

– Հայաստանի Հանրապետության պետական ռազմավարության ընթացակարգում հստակ նշված են պոչամբարների շահագործման հեռանկարները: Քանի որ մեր պոչամբարը ժառանգություն է հասել նախկին Խորհրդային Միությունից, ուներ վերընթաց համակարգ, ինչը սեյսմիկ գոտիներում բացարձակ արգելված հանգամանք է: Նախկին սեփականատերերը 2019 թ. միջազգային փորձագետներ էին հրավիրել, ովքեր բացասական եզրակացություն էին տվել, նաև ցուցում տվել, որ լրացուցիչ ամբարտակ տեղադրվի, որպեսզի պոչամբարի կայունությունն ապահովվի: Սակայն համակարգը չէր փոխվել: Հիմա աշխարհում ընդունված ամենաժամանակակից մեթոդը կենտրոնահեն տարբերակն է, որը սեյսմիկ գոտիներում ամենաարդյունավետ մոդելն է:

Մենք պատրաստվում ենք մոնիտորինգի (մշտադիտարկում) նոր համակարգեր տեղադրել՝ անգլիական սեյսմոգրաֆ սարքերով, որպեսզի դիսպետչերական կետերում բոլոր ցուցանիշները գրանցվեն՝ որտեղ ինչ է կատարվում, այսպես ասեմ՝ վեց ամսվա կտրվածքով կարելի է տեսնել, թե ինչ է կատարվում պոչամբարում: Պոչամբարի հետ կապված վերընթաց համակարգն ենք փոխում՝ կենտրոնահենի, քանի որ վերընթաց համակարգը միջազգային պրակտիկայում իրեն ոչ մի ձևով չի արդարացված: Պոչամբարի բոլոր վթարները՝ Կոլումբիայում և այլուր, եղել են վերընթաց համակարգի պատճառով: Հիմա պատրաստվում ենք կիրառել կենտրոնահեն տարբերակը, ինչպես նաև իրականացնում ենք ռեկուլտիվացիոն աշխատանքներ վերջին վեց ամսում: Յուսիսային պատվարն ամբողջովին ռեկուլտիվացվել է, կանաչապատվել:

Ամփոփեմ ասվածը՝ պոչամբարի գործունեության համակարգը փոխում ենք և այս պահին նոր պոչամբար չենք պատրաստվում կառուցել, եղածը դեռևս բավարարում է: Նպատակը եղած պոչամբարին ավելի կայուն վիճակի հասցնելն է:

– Աշխատանքային անվտանգության մասին...

Եվ, եթե կարելի է, մի փոքր ավելի հանգամանալից արագ արձագանքման լեռնափրկարար ջոկատի մասին:

– Անվտանգության մասին վերևում խոսվեց, լեռնափրկարար ջոկատի մասին կխոսեմ. այն անցյալ տարվա հունիսից սերտիֆիկացված է, վերազինված է անհրաժեշտ ժամանակակից պարագաներով: Հայաստանի լավագույն լեռնափրկարար ջոկատներից է՝ ապահովված և՛ մարդկային, և՛ գույքային ռեսուրսներով: Լեռնափրկարար ջոկատն ամենօրյա այցեր է կատարում հանքավայրի ռիսկային տեղամասեր, ստուգում ապաստարանների վիճակը, ուսումնական տագնապներ է կազմակերպում, ինչպես նաև դասընթացներ իրականացնում, թե ինչպես (արտակարգ իրավիճակում) առաջին օգնություն պիտի կազմակերպել մարդկանց: Անձնակազմի յուրաքանչյուր անդամ իր հավաքատեղին գիտի, ապաստարաններն ամեն ինչով ապահովված են...

– Շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգը. ինչպե՞ս եք վերահսկում կամ կառավարում բնական միջավայրի վրա ընկերության գործունեության ազդեցությունը:

– Այո, մենք ստուգում ենք և՛ ջրերի, և՛ կենսաբազմազանության վրա շրջակա միջավայրի ազդեցությունը: Նաև անկախ կազմակերպություններից հրավիրում ենք մարդկանց, ովքեր մոնիտորինգ են անցկացնում: Ընկերության բնապահպանական բաժինն իր չափիչ սարքերով ստուգում է օդի բաղադրությունը, թե որքանով է աղտոտված, օրինակ, Կապանի Բաղաբերդ թաղամասում: Թույլատրելի սահմաններ կան, որոնք անցնելու դեպքում տուգանք ես վճարում: Անցյալ տարի ֆաբրիկայից փոշու արտահոսք էր արձանագրվել, ժողովուրդը բողոքում էր, ջրային երեք թնդանոթ տեղադրեցինք, հարցը բավականաչափ լուծվեց:

– Որպես գլխավոր ճարտարագետ, ի՞նչն է ամենից առավել Ձեզ մտահոգում:

– Երկրին խաղաղություն լինի, մյուս բոլոր հարցերը լուծելի են: Եթե խաղվա օրվա հանդեպ հավատը լիարժեք լինի, հայը ստեղծող ազգ է, մենք խելացի մարդկանց պակաս չունենք: Իսկ Կապանում շատ խելացի ժողովուրդ է ապրում: Այստեղ շատ հեշտ է հանքարդյունաբերության գործ կազմակերպելը: Նախ՝ ժողովուրդը գրագետ է, հետո՝ եթե երեխան տեխնիկական գիտելիքներ չունի, սպորտային խմբակ են ուղարկում: Տեսնում ես՝ երեխան անիմաստ չի մեծացել: Ժողովուրդը շատ լավ մակարդակ ունի, շփումը հեշտ է, գրագետ են: Աշխատանքի կազմակերպման ամենահեշտ ճանապարհը գրագետ մարդու հետ աշխատելն է:

– Այն ամենը, ինչ տեսանք կոմբինատում, հաճելի է: Այդքանով հանդերձ, ի՞նչ խոշոր ծրագրեր ունեք՝ տեխնիկական վերազինման տեսակետից, որ առաջիկա տարիների համար համարում եք առաջնահերթ:

– Ընկերության քաղաքականության առումով կայունացման փուլից անցել ենք զարգացման փուլ, սկզբից՝ 2023 թվականին շատ դժվար էր, ներկայումս ընկերությունն ունի զարգացման հեռանկարային ծրագրեր, որոնք միտված են հանքավայրի կյանքը երկարացնելուն, որոշակի ներդրումների, վերազինումների շնորհիվ արտադրանքի ինքնարժեքն իջեցնելուն: Առաջիկայում նախատեսում ենք լեռնահետախուզական աշխատանքները զարգացնել, ունենալ մի իրավիճակ, որ գոնե 30-40 տարով երկարաձգենք ընկերության կյանքը: Մանավանդ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրն ունի թաքերով տարածվելու ռեսուրսներ: Իսկ այսօր կան կիսաշահագործված, կիսալքված հանքավայրերը վերակենդանացնելու խնդիրներ, որպեսզի մեզնից հետո եկող սերունդն էլ աշխատանք ունենա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՎ
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ՇԱՀՈՒՅԱՆԻ ՈՍԿԻ-ԲԱՁՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ. ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

Լուսանկարները՝ Նվեր Չելյայի

ՇԱՀՈՒՅԱՆԻ ՈՍԿԻ-ԲԱՁՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ. ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

Լուսանկարները՝ Նվեր Չելյայի

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ

Արտադրության տեխնիկական վերազինումը՝ հաջողության գրավական

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ խոշոր հարկ վճարողների շարքում

Հերմինե Խաչատրյան
գլխավոր հաշվապահ

2025 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն հայտնվել է խոշոր հարկ վճարողների առաջին հազարի մեջ՝ զբաղեցնելով 97-րդ հորիզոնականը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ տվյալ ցուցանիշն ամբողջապես չի արտացոլում ընկերության կողմից 2024 թվականի արդյունքների հիման վրա կատարված հարկային պարտավորությունների իրական ծավալը, քանի որ դրանց զգալի մասը վճարվել է 2025 թվականի ապրիլ ամսին՝ հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ կարելի է հիմնավոր ակնկալել, որ 2025 թվականի առաջին կիսամյակի և ամբողջ տարվա արդյունքներով Կապանի ԼՀԿ-ն կբարելավի իր դիրքը՝ արժանապատվորեն ընդգրկվելով խոշոր հարկատուների առաջատար շարքում:

ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐՆ՝ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ (ՄԼՆ ԴՐԱՄ)



ԲԱՑՍԱԹԻՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՄՔԵՐ

Տիգրան Բաղդասարյան
տեխնիկական սպասարկման և ծրագրային ապահովման թիմի ղեկավար

Անահիտ Առուստամյան
հաշվապահ

Գևորգ Գևորգյան
երկրաբան

Հարություն Հարությունյան
հորատող

Սամվել Մնացականյան
հորատող

Դավիթ Խաչատրյան
ՀԿ մեքենավար

Կամո Հակոբյան
հերթափոխի պետի տեղակալ

Արմեն Վարդանյան
հորատող



Անահիտ Սարգսյան
բուժքույր

ԲԱՑՍԱԹԻՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՄՔԵՐ

Վալերի Մեժլումյան
լեռնային տեխնիկայի տեղամասի պետի տեղակալ

Ռուբիկ Սամվելյան
էլեկտրագազաեռակցող

Էդգար Տատինյան
էլեկտրաեռակցող

Հարություն Օհանջանյան
ԲՄ մեքենավար

Լևոն Դալլաքյան
ավտոփականագործ / փականագործ

Տիգրան Մնացականյան
փականագործ

Մանվել Հայրապետյան
վարպետ



Արայիկ Հովհաննիսյան
օպերատոր

Գայանե Դալլաքյան
ավագ հսկիչ՝ հարստացման արտադրանքի (հ/Ֆ)

ԲԱՑՄԱԹԻՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՄՔԵՐ

Արմեն Բաղդասարյան
էլեկտրաֆիկանագործ

Լուսյա Միքայելյան
լաբորանտ (ICP և AAS անալիզի)

Արթուր Հովհաննիսյան
վաճառքի և լոգիստիկայի բաժնի պետ

Թոմիկ Բոյաջյան
հորատող

Վահագն Մեսրոպյան
փականագործ

Արմեն Բարսեղյան
մարկշեյդեր՝ տեղամասային ստորգետնյա աշխատանքների

Դավիթ Հարությունյան
փականագործ

Ռոման Մարտիրոսյան
էլեկտրագազաեռակցող

Հարություն Բաղդասարյան
ճարտարագետ

ԿՈՍԲԻՆԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՂԱԿՆԵՐԸ. ԼԵՐԿԱՅՑՆՈՒՄ ԵՆ ԼՐԱՑ ՊԵԿԱՐԿԵՐԸ

Հարստացուցիչ ֆաբրիկան մեր ընկերության ամենաառանցքային օղակն է:

Սամվել Ղազարյան
հարստացուցիչ ֆաբրիկայի պետ

Որպեսզի պարզ ու հասկանալի լինի ֆաբրիկայի գործունեությունը, հետեւյալն ասեմ... Հանքից դուրս բերված հանքաքարը փոխադրվում է ջարդման տեղամաս, կատարվում է ջարդում, մանրացում, ապա ֆլոտացիա, իսկ վերջում խտանյութը ջրազրկվում է, եւ ունենում ենք պատրաստի արտադրանք՝ խտանյութ:

Արտադրում ենք երկու տեսակի խտանյութ՝ ա) ոսկու խտանյութ՝ պղնձով կամ պղնձի խտանյութ՝ ոսկով, բ) ցինկի խտանյութ՝ ոսկու պարունակությամբ:

Պատասխանատու այդ գործն իրականացնում ենք 120 աշխատողով, շուրջօրյա աշխատանքով՝ հերթափոխով (սպասարկող անձնակազմը դուրս է բերվել ֆաբրիկայի կառուցվածքից):

Ֆաբրիկան ունի տարեկան 600 հազար տոննա հանքանյութի մշակման արտադրողականություն:

Ներկայումս ֆաբրիկայում վերազինման աշխատանքներ են կատարվում: Ֆլոտամեքենաներ ենք ավելացնում պղնձի, ցինկի համար, նաև աղացամեքենա, ինչի արդյունքում բարձրանալու են մանրացման աստիճանը, կորզման ցուցանիշները: Հիմնականում

Ֆաբրիկան ապահովված է անհրաժեշտ ու բարձրորակ մասնագետներով՝ ֆլոտատոր, հերթափոխի պետ, օպերատոր...

ՐԻՓ 25 ռուսական արտադրության ֆլոտացիոն մեքենաներ են, փորձում ենք նաեւ այլ ֆլոտոմեքենաները:

Երկար ժամանակ ֆաբրիկայում տեխնիկական վերազինում չէր կատարվել, ուստի եւ ներկայումս կատարվող փոփոխությունները պահանջված էին:

Ջարդման տեղամասում էլ աշխատանքի պայմաններն ենք բարելավել. մասնավորապես՝ ռոտորային ջարդիչի վրա տեղադրել ենք երեք ջրային թնդանոթ, որոնք առաջացող փոշին կլանելու, շրջակա միջավայրը մաքուր պահելու խնդիր են լուծում:

Ասեմ նաեւ՝ ֆաբրիկան ապահովված է անհրաժեշտ ու բարձրորակ մասնագետներով՝ ֆլոտատոր, հերթափոխի պետ, օպերատոր եւ այլն:

Ընկերության նոր սեփականատերը նաեւ վարձատրության եղանակն է փոխել՝ հիմքում դնելով եւ անհատական, եւ հերթափոխային սկզբունքը: Վարձատրության ներդրված եղանակը խրախուսում է հանքագործներին՝ ավելի որակյալ կատարելու իր աշխատանքը:

Շատ կարեւոր է նաեւ ոլորտի համաշխարհային փորձին պարբերաբար ծանոթանալը: Ինքս ֆաբրիկայում աշխատում եմ 2004 թվականից, սկսել եմ ֆլոտատորից, եղել եմ հերթափոխի պետ, արտադրության աշխղեկ, տեխնոլոգ, ֆաբրիկայի արտադրության ղեկավար, գլխավոր ինժեներ, իսկ 2019 –ից՝ հարստացուցիչ ֆաբրիկայի պետ:

Կատարված ու կատարվող աշխատանքների, ձեռնարկվող միջոցառումների շնորհիվ բարձրանում է խտանյութի որակը, եւ ստանում ենք վաճառքի համար պայմանագրով սահմանված չափորոշիչներին համապատասխան խտանյութեր՝ զուգահեռաբար իրականացնելով որակի վերահսկողություն:

Ընկերության նոր սեփականատերը նաեւ վարձատրության եղանակն է փոխել՝ հիմքում դնելով եւ անհատական, եւ հերթափոխային սկզբունքը:

ԿՈՄԲԻՆԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՂԱԿԵՐԸ. ԵՐԿԱՅՑՆՈՒՄ ԵՆ ԼՐԱՑՆԵԼ ՕԵԿԱՄՈՒՏԵՐԸ

Առնակ Բաբայան
գլխավոր ճարտարագետի տեղակալ, ստորգետնյա հանքի պատասխանատու

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքը շահագործվում է ստորգետնյա եղանակով:

Շահագործումը 2023 թվականից իրականացնում է «Էս ընդ Էյ Մայնինգ» կապալառու ընկերությունը, որն առանձին կազմակերպություն է եւ չի մտնում «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ կառուցվածքի մեջ:

Ամբողջ հանքաբարի արդյունահանումը՝ տարեկան մոտ 600 հազար տոննա, այդ ընկերությունն է իրականացնում:

Ինքս եւ Կապանի ԼՀԿ-ի գլխավոր ճարտարագետի տեղակալն եմ, եւ կապալառու ընկերության ներկայացուցիչը:

Հանքում գործընթացն այսպիսին է՝ պլանավորում, տեխնիկական գործընթացներ, որից հետո շահագործում:

Մոտ 680 մարդ է ընդգրկված ստորգետնյա աշխատանքում:

Երբ 2023-ի սեպտեմբերին սկսեցինք շահագործել ստորգետնա հանքը՝ տեխնիկական վիճակն այնտեղ շատ վատ էր, տխուր էր նաեւ բարոյահոգեբանական մթնոլորտը:

Բոլոր ենթակառուցվածքները թերի էին ու անմխիթար վիճակում, որն ամբողջությամբ վերակազմակերպեցինք:

Եվ, փաստորեն, աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծեցինք, աշխատավարձն էլ բարձրացվեց 11 տոկոսով:

Էական փոփոխություններ կատարվեցին հատկապես անվտանգության ոլորտում՝ կիրառելով նաեւ նոր մեթոդներ ու լուծումներ՝ բետոնային աշխատանք, ամրակցում եւ այլն:

Արել ենք այնպես, որ բոլոր հերթափոխերում անվտանգության ինժեներները սերտ համագործակցության մեջ լինեն տեղամասի պետերի հետ եւ մշտապես հանքում գտնվեն:

2023-ի սեպտեմբերից մինչեւ հիմա 330 մարդ ենք ընդունել աշխատանքի՝ հերթափոխի պետ, հորատող, փականագործ, էլեկտրիկ...

Շատերն են ցանկանում մեզ մոտ աշխատանքի ընդունվել: Իսկ աշխատանքի ընդունվողներին նախապատրաստում ենք, դասընթացների միջոցով ուսուցանում, եռամսյա ժամանակ տալիս՝ ինտեգրվելու, պարտականություններին տիրապետելու համար: Երբեմն մարդիկ չեն կարողանում տիրապետել նախընտրած մասնագիտությանը եւ ուղղորդում ենք այլ աշխատանքի:

Իհարկե, նախկին ժամանակներից կոմբինատը՝ կադրային առումով, բավականին լավ ժառանգություն է ստացել: Բայց, դրան զուգահեռ, շարունակում ենք կադրերի պատրաստման ու վերապատրաստման աշխատանքները:

Մասնագիտությամբ պայթեցնող եմ, նախկինում աշխատել եմ Ախթալայի լեռնահարստացման կոմբինատում, Վրաստանում, Լիճքվազում: Եվ համեմատություններ անցկացնելով կարող եմ ասել՝ Կապանի հանքը ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ Անդրկովկասում լավագույնն ու առաջադիմականն է՝ տեխնոլոգիաներով, աշխատանքի կազմակերպմամբ, անվտանգության համակարգով:

Գնացել էինք Գերմանիա՝ մի հանքի շահագործման փորձին ծանոթանալու համար, բայց պարզվեց, որ մենք ավելի առաջադեմ ենք:

Մոտ օրերս էլ Վրաստանից են գալու՝ մեր փորձին ծանոթանալու նպատակով:

Եվ, այդքանով հանդերձ, ձեռք բերվածով չենք բավարարվում ու ձգտում ենք նոր նախագծեր կյանքի կոչել՝ ծրագրերն ավելի լավ իրականացնելու համար: "

2023-ի սեպտեմբերից մինչեւ հիմա 330 մարդ ենք ընդունել աշխատանքի՝ հերթափոխի պետ, հորատող, փականագործ, էլեկտրիկ... Շատերն են ցանկանում մեզ մոտ աշխատանքի ընդունվել:

"

ԿՈՄԲԻՆԱՏ ՀԻՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՐԱԿԵՐԸ. ԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՒՏԱԿԵԼ ԴԵՊԻ ԱՄԱՌԱՆՑՔ

Տիգրան Հովհաննիսյան
գլխավոր երկրաբան

Ընկերության երկրաբանական ծառայությունը բաղկացած է 70 հոգուց եւ բաժանված երեք ստորաբաժանումի՝ արտադրական, շահագործողական-հետախուզական եւ տվյալների բազայի ու ռեսուրսների:

Արտադրական տեղամասը հիմնականում հանքում կատարում է նմուշարկման աշխատանքներ, որի շնորհիվ հայտնաբերվում են նոր երակներ կամ արդեն հայտնաբերված երակները նմուշարկվում են նոր հորիզոններում:

Տվյալների բազայում եւ ռեսուրսների տեղամասում մուտք են արվում արդյունքները՝ պարունակությունները, որի համաձայն արդեն կառուցվում են (օգտվելով նաեւ մարկշեյդերական գնահատումներից) հանքային մարմինները՝ ինչ տարածմամբ, ինչ հզորությամբ եւ ինչ պարունակությամբ:

Այդ ամենից հետո ունենում ենք հստակ հանքային մարմին ու արդեն կարողանում ենք հաշվարկել, թե տվյալ հանքային մարմնում որքան բաղադրիչներ կան, ինչ պարունակությամբ եւ որքանով է ձեռնտու դրանց արդյունահանումը ու մշակման ինչ մեթոդով:

Շահագործական-հետախուզական աշխատանքներ. արտադրությանը զուգահեռ կատարվում են հորատման աշխատանքներ, որը կոչվում է յունակային հորատում՝ հանելով հորատհանուկ: Դրանք առաջ ընկած աշխատանքներ են ավելի խորը հորիզոններում՝ հանքավայրի թեւերում:

Այդ հորատման հիման վրա հետո որոշվում է՝ փորվածքը շարունակե՞լ այդ ուղղությամբ, թե՞ ոչ:

2023-ի սեպտեմբերից հետո շահագործողական-հետախուզմանը մեծ ուշադրություն է դարձվում. Ներկայումս ամսական հատումները հասցրել ենք 6000 մետրի (նախկինում 3500 էր):

Եվ դա հնարավորություն է տալիս պաշարների աճ ապահովել ու ավելի երկարացնել հանքավայրի կյանքը:

Պաշարների վերահաշվարկը տասը տարին մեկ պետությունը պարտադրում է, եւ ընկերությունները պարտավոր են պաշարների վերահաշվարկ կատարել, որպեսզի գնահատեն՝ ինչ պաշար ունեին, ներկայումս որքան է մնացել: Կատարված աշխատանքների շնորհիվ պաշարն աճ գրանցել է, թե ոչ:

Ներկայումս մեր ընկերությունը գտնվում է պաշարների վերահաշվարկի փուլում:

2024 թ. հունվարի 1-ի դրությամբ մեր պաշարներն մուտք են արվել ՏԿԵ նախարարություն, եւ եթե այն հաստատվի, ապա կունենանք ռեալ պաշարների աճ:

Հաջորդ քայլն այն եղավ, որ մենք չկենտրոնացանք միայն բուն հանքավայրի վրա: Որոշվեց հանքավայրի թեւերում նույնպես կատարել հետախուզական աշխատանքներ:

Ներկայումս արեւելյան թեւում ակտիվ աշխատանքներ են կատարվում:

Հանքավայրի արեւմտյան թեւում նախագծային փուլում ենք գտնվում, այսինքն՝ նախագծեր ենք անում:

Մեր թիմը մասնագետներով համալրված է, բայց երկրաբանի մասնագիտությամբ կադրեր դժվար է գտնել, նոր սերունդը (ցավոք) չի նախընտրում այդ մասնագիտությունը:

Ստեղծված իրավիճակից ելնելով՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերությունը համագործակցում է Երեւանի պետական համալսարանի հետ, որտեղ գործում է երկրաբանական ֆակուլտետ, ինչը, կարծում եմ, կխթանի երկրաբանական կադրերի հետագա պատրաստումը:

Ներկայումս մեր ընկերությունը գտնվում է պաշարների վերահաշվարկի փուլում: 2024 թ. հունվարի 1-ի դրությամբ մեր պաշարներն մուտք են արվել ՏԿԵ նախարարություն, եւ եթե այն հաստատվի, ապա կունենանք ռեալ պաշարների աճ:

ԿՈՄԲԻՆԱՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՏԿՈՐԱԿԱՆ ՕՂԱԿԵՐԸ. ԵՐԿԱՅՑՈՒՄ ԵՆ ՆՈՍՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Գարիկ Թումանյան
գլխավոր մարկշեյդեր

Նախ՝ կուզենայի ներկայացնել, թե ինչ ասել է մարկշեյդերական գործ, որը քիչ հայտնի է հանրությանը:

Դա հանքային գիտության բաժին է, որն օգտագործում է երկրի մակերևույթի վրա եւ հանքափորվածքներում կատարված տարածական–երկրաչափական չափումների տվյալները տեխնիկական խնդիրների լուծման համար՝ օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման եւ շահագործման ժամանակ, ինչպես նաեւ լեռնաշինարարական աշխատանքներ կատարելիս: Աշխատանքները կատարվում են մարկշեյդերական գործիքներով:

Մարկշեյդերական գործը, կարելի է ասել, լեռնահանքային արդյունաբերության բոլոր փուլերի անբաժանելի մասն է:

Այդ աշխատանքներն իրականացնում է մարկշեյդերական ծառայությունը, որը մտնում է հանքային ձեռնարկության կամ կազմակերպության մեջ: Հանքավայրերի մանրամասն հետախուզության ժամանակ այդ ծառայության խնդիրն է հենացանցի կառուցումը երկրի մակերեւույթի, բոլոր գործող հանքափորվածքների, բնական եւ արհեստական մերկացումների հանույթը: Հանքային ձեռնարկությունների նախագծման դեպքում մարկշեյդերները մասնակցում են նախագծաորոնողական աշխատանքներին, հանքային ձեռնարկությունների սահմանների եւ հանքավայրերի մշակման համակարգի նախագծմանը, շենքերի և կառույցների տեղաբաշխմանը...

Հանքային ձեռնարկությունների շինարարություն կատարելիս մարկշեյդերական ծառայությունն իրականացնում է հենակետերի ցանցի կառուցումը եւ շինարարության նախագծի երկրաչափական տարրերի փոխադրումը տեղանք, տալիս է հանքափորվածքների անցման ուղղությունները: Հանքավայրը շահագործելու դեպքում մարկշեյդերական ծառայությունն արձանագրում է հանքային ձեռնարկության արտադրական պրոցեսի դինամիկան եւ կազմում հանքային գրաֆիկական փաստագրման գծագրերը, հանքափորվածքների առաջանցմանը զուգընթաց ճշգրտում է հանքավայրերի տեղադրման պայմանները, օգտակար հանածոյի որակը, մարմինների ձևը, ներփակող ապարների հատկությունները:

Մենք՝ 30 հոգանոց թիմով, հենց նման աշխատանքներ ենք իրականացնում:

Եվ այդ աշխատանքները՝ ամենօրյա ռեժիմով, կատարում ենք հանքի ղեկավարանձնակազմի, երկրաբանական ծառայության եւ այլ բաժինների հետ:

Նաեւ՝ պետականորեն սահմանված կարգով, երկրաբանների հետ, փաստաթղթավարություն ենք իրականացնում:

Ընկերության նոր սեփականատերը լուրջ ուշադրություն է դարձնում մեր ծառայությանը: Նախ՝ աշխատակազմն է համալրվել՝ 12 հոգուց հասցվելով 30-ի:

Այնուհետեւ՝ ապահովվել ենք անհրաժեշտ բոլոր գործիքներով ու սարքավորումներով, ընդ որում՝ ժամանակակից:

Եվ այդ վերափոխումները հնարավորություն են տալիս լավագույնս կատարելու մեր գործառույթները:

Մարկշեյդերական գործը, կարելի է ասել, լեռնահանքային արդյունաբերության բոլոր փուլերի անբաժանելի մասն է:
Այդ աշխատանքներն իրականացնում է մարկշեյդերական ծառայությունը, որը մտնում է հանքային ձեռնարկության կամ կազմակերպության մեջ:

Կայուն զարգացման նոր փուլում. Կապանի ԼՀԿ-ն համայնքի ու մարդկանց կողքին

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ներկայացնում է «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի կայուն զարգացման հարցերով տեղակալ Հովհաննես Հարությունյանը

Կապանի լեռնահարստացման կոմբինատը, որի գործունեությունը սկսվում է դեռ խորհրդային շրջանից, այսօր ոչ միայն խոշոր արդյունաբերական միավոր է, այլև սոցիալական պատասխանատվություն կրող կառույց, որը գործուն մասնակցություն ունի Կապան համայնքի զարգացման գործում: Ընկերության գլխավոր տնօրենի կայուն զարգացման հարցերով տեղակալ Հովհաննես Հարությունյանը պատմում է, թե ինչպես է կոմբինատը վերափոխվում՝ դառնալով մարդակենտրոն, երկարաժամկետ պատասխանատվություն կրող կառույց:

Կայուն զարգացումը՝ ռազմավարություն

«Կայուն զարգացումը մեր մոտեցման հիմքում է: Հանքարդյունաբերությունը, լինելով ռիսկային ոլորտ, չի կարող հաջողությամբ զարգանալ՝ առանց բնապահպանական և սոցիալական հետևանքների պատշաճ կառավարման: Մենք ոչ միայն գնահատում ենք ռիսկերը, այլ իրական քայլեր ձեռնարկում՝ դրանք կառավարելու համար», – նշում է պարոն Հարությունյանը:

Ընկերությունը համոզված է, որ հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ոչ միայն կարճաժամկետ տնտեսական ակտիվությանը, այլև համայնքի ապագա զարգացմանը: Օրինակ, համեմատելով Դաստակերտի փորձը, որի բնակչությունն անկում ապրեց հանքարդյունաբերության դադարեցումից հետո, կոմբինատը ձգտում է Կապանի համար ձևավորել բազմաբնույթ տնտեսական միջավայր:

Աշխատակիցների և համայնքի շահերի պաշտպանություն

Կապանի ԼՀԿ-ի սոցիալական քաղաքականությունն ընդգրկում է երկու հիմնական ուղղություն՝ աշխատակիցների բարեկեցության ապահովում և համայնքի զարգացում:

«Մենք ներդնում ենք առողջապահական ապահովագրության համապարփակ համակարգ, որը ներառում է նաև կանխարգելիչ բուժզննումներ: Դա ոչ միայն հիվանդության դեպքում աջակցություն է, այլ կյանքի որակի բարելավման ուղի», – ասում է Հ. Հարությունյանը:

Ապահովագրությամբ ընդգրկված են նաև ենթակապալառուների աշխատակիցները: Ծառայությունները հիմնականում իրականացվում են Կապանում, ինչը նպաստում է նաև տեղի բժշկական կենտրոնների զարգացմանը:

Համայնքի զարգացման ծրագրեր

Կոմբինատը համայնքում իրակա-

նացնում է մի շարք համաներդրումային և ուղղակի սոցիալական ծրագրեր՝ աջակցություն դպրոցներին, մանկապարտեզներին, տրանսպորտի ապահովում ազդակիր բնակավայրերում (օր.՝ Գեղանուշում):

Բացի սոցիալական ծրագրերից, Կապանի ԼՀԿ-ն նպատակ ունի Կապանը դարձնել գրավիչ վայր ապրելու և զբոսաշրջության տեսանկյունից: Ընկերությունը տեսնում է, որ ենթակառուցվածքների զարգացմամբ հնարավոր է խթանել նաև տնտեսության այլ ճյուղեր:

Մշակույթ, սպորտ և երիտասարդություն

ԼՀԿ-ն գործուն մասնակցություն ունի համայնքի մշակութային ու սպորտային կյանքում՝ աջակցելով «Զանգեզուր» ֆուտբոլային ակումբին և Սյունիքի շախմատի ֆեդերացիային:

«Ցանկանում ենք, որ մեր երեխաներն ու դեռահասները ներգրավված լինեն զարգացնող, առողջ միջավայրում՝ հեռու փողոցի վտանգներից», – ընդգծում է Հ. Հարությունյանը:

Ուսումնական կենտրոն ու նոր մասնագետներ

Ընկերության ներսում գործում է ուսումնական կենտրոն, որտեղ աշխատակիցներն անցնում են վերապատրաստում, իսկ նորեկները՝ մասնագիտական դասընթացներ: ԼՀԿ-ն համագործակցում է ԵՊՀ-ի և ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի հետ՝ հանքարդյունաբերական մասնագիտությունների հանրահռչակման և նոր կադրերի պատրաստման ուղղությամբ:

«Ինժեներների, երկրաբանների պակասը զգացվում է ամբողջ երկրում: Մենք ուզում ենք, որ մեր երեխաները գիտակցեն՝ սա ոչ միայն պահանջված, այլև լավ վարձատրվող ու հեռանկարային ոլորտ է», – հավելում է Հ. Հարությունյանը:

Հանքագործ վետերանները՝ կոմբինատի պատմության մի մաս

Կապանի ԼՀԿ-ն պահպանում է կապը տարիներ շարունակ աշխատած վետերանների հետ՝ արժևորելով նրանց ներդրումը: Վերջին երկու տարին կոմբինատի համար կայունացման ու վերականգնման փուլ էր՝ ավելացել են աշխատատեղերը, բարձրացել են աշխատավարձերը, իսկ արտադրությունը՝ արդիականացվել:

«Ավետիս» հիմնադրամ՝ մարդակենտրոն օգնության օղակ

ԼՀԿ-ի սեփականատերերի կողմից ստեղծված «Ավետիս» բարեգործական հիմնադրամը ծառայում է սոցիալական աջակցության ծրագրերն իրականացնելուն: Հիմնադրամը գործում է թափանցիկ և հաշվետու սկզբունքներով՝ նախապես գնահատելով յուրաքանչյուր նախաձեռնության արդյունավետությունը:

«Մենք ուզում ենք, որ հիմնադրամը դառնա այն հարթակը, որտեղ օգնությունը հասնում է ճիշտ հասցեատերերին՝ նպատակային, բարեխիղճ և արժանապատիվ կերպով», – ասում է Հ. Հարությունյանը:

Հանրային կապեր՝ երկխոսության հիման վրա

Կոմբինատն ակտիվ է սոցիալական հարթակներում, մշակում է հանրային հաղորդակցության նոր ձևաչափ, որի շնորհիվ քաղաքացիների հարցերին ու առաջարկներին կարող է ավելի արագ արձագանքել:

«Մեզ հետաքրքիր է՝ մեր ծրագրերն ինչպես են ազդում մարդկանց տրամադրության և կյանքի որակի վրա: Այս կապը շատ կարևոր է՝ նոր ծրագրերը ճիշտ ուղղությամբ զարգացնելու համար», – եզրափակում է Հ. Հարությունյանը:

Այցեքարտ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Ծնվել է 1987 թ. դեկտեմբերի 10-ին Գյումրիում: 2004 թ. ավարտել է Գյումրու թիվ 1 կրթահամալիրը և, որպես բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտ, ընդունվել Մոսկվայի Ի.Մ. Սեչենովի անվան բժշկական ակադեմիա: 2006 թ. վերադառնալով Հայաստան՝ կրթությունը շարունակել է Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: 2010-ին ընդունվել է Ռուսաստանի բժշկական հետբուհական կրթության ակադեմիա և ստացել բժիշկ-վիրաբույժի բարձրագույն մասնագիտական կրթություն: Մի քանի տարի բժիշկ-վիրաբույժի մասնագիտական գործունեություն է ծավալել Մոսկվայի ՆԳԳՎ կլինիկական հոսպիտալում, այնուհետև այլ մասնավոր կլինիկաներում: Մասնագիտական վերապատրաստում անցնելով Մոսկվայի բժիշկների կատարելագործման ինստիտուտում՝ «Առողջապահության կազմակերպում և հանրային առողջություն» մասնագիտությամբ, 2016 թ. վերադարձել է Հայաստան և ղեկավարել Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկան»: 2017-ին մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Բիզնեսի կառավարման ռազմավարություն» դասընթացին և ստացել համապատասխան որակավորում: 2018 թ. նշանակվել է ՀՀ ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի տնօրենի տեղակալ՝ պոլիկլինիկական ծառայության գծով: 2019 թ. փետրվարից զբաղեցրել է ՀՀ առողջապահության նախարարի խորհրդականի պաշտոնը, ապա եղել փոխնախարար:

2021 թ. հունվարից նշանակվել է Շիրակի մարզպետ: Նույն տարվա նոյեմբերին տեղափոխվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ համակարգել հանքարդյունաբերության ոլորտը:

2025 թ. ապրիլից «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության կայուն զարգացման հարցերով փոխտնօրենն է:

Աշխատանքի և արտադրական անվտանգության քաղաքականություն

Էդգար Մարտիրոսյան
աշխատանքի և արտադրական անվտանգության բաժնի պետ



Աշխատակիցների առողջության պահպանման համար առավելագույն անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծումը «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության անվերապահ առաջնահերթությունն է: Մեր մշակույթի առանցքային մասն են կազմում աշխատավայրում պատահարների և արտադրական վնասվածքների թվի զրոյացումն ու դրա պահպանումը, որին խթանում է ղեկավարության կողմից առաջնորդումն ու աշխատակիցների ակտիվ մասնակցությունը՝ անվտանգության պահպանման մեթոդների ու միջոցների մշակմանը: Մեր գործունեության բոլոր ոլորտներում և կառավարման բոլոր մակարդակներում ղեկավարվում ենք հետևյալ սկզբունքներով.

- գնահատել ռիսկերը և դրանք դարձնել կառավարելի,
- ապահովել օրենսդրական պահանջների կիրառումը,
- բարձրացնել անվտանգության իրազեկման մակարդակը և արժևորել յուրաքանչյուրի մասնակցությունը,
- մշտապես բարձրացնել արդյունավետությունը,
- կիրառել առաջատար մեթոդներ և ցուցաբերել համակարգված մոտեցում:

Ընկերության պարտավորություններն են՝

- կիրառել առաջատար փորձ և ժամանակակից մոտեցում ռիսկերի հայտնաբերման, գնահատման և դրանց նվազեցման համար,
- ապահովել առողջապահության և անվտանգության բնագավառներում օրենսդրական նորմերի ու ընկերության կողմից ընդունված այլ պահանջների կիրառումը,
- զարգացնել անձնական պատասխանատվության զգացումը՝ աջակցելով աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավմանը և անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված նախաձեռնություններին,
- ապահովել աշխատանքների անվտանգ կատարման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով ու գործիքներով:

Բաժնի գործառույթները

Առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր ստեղծելու համար աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկական գծով ճարտարագետները՝

- կատարում են ամենօրյա ստուգայցեր ընկերության բոլոր ստորաբաժանումներում,
- իրականացնում են ներածական, նախնական, պլանային և արտապլանային հրահանգավորումներ,
- կազմակերպում են աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներ,
- կազմակերպում են արտադրական վտանգավոր օբյեկտների տարեկան փորձաքննություն,
- կազմակերպում են աշխատակիցների տարեկան պարբերական բուժզննություն,
- համագործակցում են լիցենզավորված կազմակերպությունների և տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմինների հետ,
- վերահսկում են ընկերության տարածքում 24-ժամյա գրաֆիկով հերթապահություն իրականացնող հատուկ լեռնափրկարար ջոկատի և բժշկական կենտրոնի աշխատանքները,
- իրականացնում են տեխնածին պատահարների և արտակարգ իրավիճակների տեխնիկական հետաքննություն, հաշվառում և վերլուծություն,
- մշակում են ընթացակարգեր, կանոնակարգեր և ստանդարտ շահագործման ընթացակարգեր:

//

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բնապահպանությունը՝ ընկերության առաջնահերթություն

Աիդա Ալեքսանյան
բնապահպանության բաժնի պետ

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության երկարամյա գործունեության ընթացքում առաջնահերթությունների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում բնապահպանական ոլորտը: Ընկերությունը քաջ գիտակցում է, որ կայուն զարգացումն ապահովելու և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով պարտավոր է հետևել ՀՀ օրենսդրությամբ սահմանված բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարմանը՝ միևնույն ժամանակ կիրառելով լավագույն միջազգային փորձը: Ընկերությունում բարեհաջող կերպով ներդված է և գործում է բնապահպանական մենեջմենթի համակարգը, այն հավատարմագրված է միջազգային ISO 14001: 2015 ստանդարտի պահանջներով, և առկա է հավաստագիր՝ տրված «Բյուրո Վերիտաս» ընկերության կողմից:

Արտադրանքի ստեղծման ցիկլի յուրաքանչյուր փուլում վերլուծվում և գնահատվում են բոլոր բնապահպանական ռիսկերը: Կազմվում է բնապահպանական ռիսկեր պարունակող ասպեկտների ցանկ և դրանցից ընտրված զգալի ասպեկտների կառավարելիությունն ապահովելու ու ռիսկերը նվազեցնելու նպատակով՝ առնվազն երկու տարին մեկ, կազմվում և իրագործվում է բնապահպանական միջոցառումների պլանը:

Բնապահպանական միջոցառումների պլանի բաղադրիչները ձևավորվում են նաև ընկերության կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում:

Մշտադիտարկումների համար նախատեսված դիտակետերն ընտրվում են թե արտադրական տարածքներում, թե արտադրական տարածքներից դուրս՝ սանիտարական պաշտպանիչ գոտում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների նմուշառումը և ուսումնասիրություններն իրականացվում են հստակ պարբերականությամբ՝ օրական, շաբաթական, ամսական և եռամսյակային:

Մթնոլորտային օդի բաղադրությունը որոշվում է ստուգաչափիչ սարքերի միջոցով: Հողի և ջրի նմուշների քիմիական կազմը՝ նիտրիտներ, նիտրատներ, ծանր մետաղներ և այլն, որոշվում են հավատարմագրված անկախ լաբորատորիաներում: Մշտադիտարկումների արդյունքների վերլուծությունն իրականացվում է բնապահպանության բաժնի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմատիվային պահանջներից ելնելով, իսկ կազմված միջինացված հաշվետվությունը՝ եռամսյակային և տարեկան կտրվածքով, ներկայացվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն և հասանելի է հանրության համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդի, հողի, ջրի և կենսաբազմազանության պարբերական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերահսկել և ժամանակին կանխել արտադրական գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցությունը:

Ընկերության գործունեությունը բնապահպանական ոլորտում. դրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունն իրականացվում է ընկերության ղեկավարության կողմից, ինչի արդյունքում նաև ձևավորվում է հետագա տարիների համար բնապահպանական գործունեության բարելավմանը միտված միջոցառումների պլանը:



ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ընկերության աշխատակիցների թվաքանակը վերջին 3 տարվա կտրվածքով



Մարդկային ռեսուրսները՝ ընկերության ամենաթանկ կապիտալ

Մարիաննա Հովհաննիսյան
կադրերի բաժնի պետ

Ընկերության մարդկային ռեսուրսների կառավարման հիմքում ամենակարևոր կապիտալը մարդն է: Մենք կառուցում ենք գիտելիքահեն, ապագային միտված և մարդակենտրոն միջավայր, որտեղ յուրաքանչյուր աշխատակից կարող է աճել և զարգանալ՝ նպաստելով ընկերության կայուն զարգացմանը:

Ընկերությունը կադրերի ընտրությունն իրականացնում է թափուր հաստիքի համալրման սահմանված ընթացակարգով՝ հատուկ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից:

Ընտրության ողջ գործընթացը կազմակերպվում և կատարվում է թափանցիկության սկզբունքով՝ ապահովելով արդար մրցակցություն և հավասար հնարավորություններ բոլոր թեկնածուների համար:

Խթանում ենք հավասար հնարավորությունների մշակույթ՝ անկախ սեռից, տարիքից, ազգությունից կամ մասնագիտական փորձից, կիրառում ենք սերունդների հաջորդականության ապահովման համակարգ տարբեր օղակներում և մշակում հմտությունների զարգացման ծրագրեր:

Աշխատանքի բարձր արդյունավետություն և մեծ շահութաբերություն ապահովելու համար շատ կարևոր են աշխատողների հոգեվիճակը, նրանց համախմբվածությունն ու համատեղ գործելու կարողությունը, շփման հմտություններն ու արդյունավետ հարաբերությունների հաստատումը, որի համար ապահովում ենք առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր, հոգ տանում աշխատակիցների բարեկեցության մասին՝ ստեղծելով սոցիալական ապահովության մեխանիզմներ, հոգեբանական աջակցություն, կարողությունների զարգացմանն ու մասնագիտական աճին ուղղված շարունակական ուսուցման ծրագրեր: Մենք ձևավորում ենք այնպիսի աշխատանքային կոլեկտիվ, որն ունակ է արձագանքել ապագայի ոլորտային մարտահրավերներին:

Համոզված ենք, որ հարգանքն ու փոխվստահությունն են ուժեղ կազմակերպության հիմքը:

2023 թվականի սեպտեմբերից ընկերության աշխատակիցների թիվն ավելացել է 500-ով:

Իրավաբանական բաժինը՝ ընկերության իրավական անվտանգության երաշխավոր

Նարինե Հովհաննիսյան
գլխավոր իրավաբան

«Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության իրավաբանական բաժինը կարևոր դեր ունի կազմակերպության իրավական անվտանգության ապահովման գործում:

Հիմնական գործառույթներն են՝

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

- իրավաբանական խորհրդատվություն ընկերության և ստորաբաժանումների ղեկավարներին,
- իրավական փաստաթղթերի՝ պայմանագրերի, համաձայնագրերի, հրամանների, կանոնակարգերի պատրաստում և վերլուծություն,
- սեփականության, հանքային իրավունքների, լիցենզիաների, գույքի և ակտիվների հարցերով իրավաբանական խորհրդատվություն:

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

- պայմանագրերի կազմման, վերանայման, վավերացման և կատարման հսկողություն,
- Ընկերության շահերի պաշտպանության ապահովում պայմանագրային հարաբերություններում,
- պայմանագրային վեճերի կանխարգելում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

- իրավական ռիսկերի վերլուծություն և կանխարգելման միջոցառումների մշակում,
- օրենքների, նորմատիվ ակտերի փոփոխությունների ազդեցության վերաբերյալ վերլուծություն:

ԴԱՏԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

- Ընկերության շահերի ներկայացում դատարաններում, քննչական մարմիններում, պետական կառույցներում,
- դատական գործերի վարման և ընթացքի հսկողություն,
- վարչական տույժերի, տուգանքների, ստուգումների արդյունքների իրավական գնահատում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

- Ընկերության գործունեության համապատասխանության ապահովում Հայաստանի և միջազգային օրենսդրությանը,
- աշխատանքային իրավունքի, բնապահպանական և լիցենզավորման պահանջների պահպանում,
- համապատասխանության քաղաքականության մշակում:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՆԵՐԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՈՐՏՈՒՄ.

- ներքին խախտումների իրավական գնահատում:

Իրավաբանական բաժնի աշխատակազմն ընկերության այլ բաժինների և ստորաբաժանումների հետ համեմատ բազմամարդ չէ, ներկայումս երեք աշխատակից ունի, իսկ սույն թվականի հուլիսի 1-ից հողային գործի մասնագետով: Սակայն, ինչպես տեսնում եք, իր ուսերին է կրում ընկերության ամբողջ արտադրական և ոչ արտադրական գործընթացի իրավական կարգավորումներն ու իրավական ապահովումը: Այդ ամենը հնարավոր չէր լինի, եթե թիմում ընդգրկված չլինեին իրենց պարտականություններին տիրապետող աշխատակիցներ:

«Այունյաց լեռնագործներ» արհեստակցական կազմակերպությունը

Արամայիս Մարտիրոսյան
«Այունյաց լեռնագործներ» ԱԿ նախագահ

«Այունյաց լեռնագործներ» արհեստակցական կազմակերպությունը հիմնադրվել է 2021 թվականի սեպտեմբերի 28-ին: Այն հասարակական միավորում է, որը կամավորության սկզբունքով միավորում է «Էս ընդ Էյ Մայնինգ», «Արմ Մետալ Սերվիս», «Սմարթ Ինջինիրինգ» ՍՊ և «Կապանի ԼՀԿ», «Լիճքվազ» ՓԲ ընկերությունների աշխատողներին:

Կազմակերպության հիմնական առաքելությունն իր անդամների շահերը պաշտպանելը և դրա անհրաժեշտությունն առաջանալու դեպքում նրանց ֆինանսական աջակցության տրամադրումն է: Այդ գործընթացները պատշաճ համակարգելու, որոշումների օբյեկտիվություն և անկողմնակալություն ապահովելու նպատակով՝ կազմակերպությունում մշակվել և համագումարի հաստատմամբ ներդրվել են ընթացակարգեր, որոնք սահմանում են աջակցության տրամադրման հստակ չափերը, տրամադրման դեպքերը և ստանալու համար պահանջվող փաստաթղթերը: Այդ ընթացակարգերը սահմանող փաստաթղթերը հրավիրվող համագումարների որոշումներով դինամիկ փոփոխվում և խմբագրվում են՝ համապատասխանեցվելով գործունեության կոնկրետ ժամանակահատվածների կուտակած վիճակագրության վերլուծությամբ վերհանված նոր իրողություններին՝ ավելի համարժեք դառնալով կազմակերպության անդամների կարիքներին և կազմակերպությունից նրանց ակնկալիքներին:

Կանոնադրությամբ սահմանված կարգով և պարբերությամբ նախագահը հաշվետու է լինում համագումարին, լսում կազմակերպության անդամների նկատառումները, տալիս պարզաբանումներ և բացատրություններ: Համագումարներին մասնակցում են ընտրված պատվիրակներ՝ բոլոր ստորաբաժանումներից:

Ընթացակարգերով նախատեսվում է ոչ միայն աջակցությունների տրամադրում, այլև՝ մասնագիտական և այլ տոների առթիվ միջոցառումների կազմակերպում, նվերներ՝ աշխատակիցների երեխաներին, ուղեգրերի տրամադրում անդամներին՝ Հայաստանի տարբեր առողջարաններում իրենց հանգիստն անցկացնելու համար:

Կազմակերպությունը ներկայումս համագործակցում է «Արզնի առողջարան» ՓԲ, «Արարատ» մոր և մանկան առողջարան ՓԲ և «Գրանդ Ռեզորթ» ՍՊ ընկերությունների հետ: 2025 թվականից կազմակերպում են նաև մարզական միջոցառումներ: Առաջինը վոլեյբոլի մրցաշարն էր կազմակերպությունում ներգրավված ընկերությունների ստորաբաժանումների

միջև, որի հաղթողները պարգևատրվեցին նվերներով ու դրամական մրցանակներով:

Հաշվի առնելով, որ կազմակերպության անդամների գերակշիռ մասը նախկինում չէր օգտվում առողջության ապահովագրության ծառայություններից՝ կազմակերպության գործունեության ընթացակարգերով նախատեսված դրամական աջակցության ամենածանրակշիռ հոդվածն ուղղվում էր կազմակերպության անդամների և նրանց ընտանիքի անդամների առողջության վերականգնման ծախսերի հատուցմանը: Սակայն «Այունյաց լեռնագործներ» արհեստակցական կազմակերպությունը ներկայում կազմակերպության անդամների գործատուները՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն, «Լիճքվազ» ՓԲԸ-ն, «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ն և մյուս ընկերությունները, նախաձեռնել են աշխատողների առողջության՝ ընկերությունների հաշվին համապարփակ ապահովագրության գործընթաց: Սա նոր հորիզոններ է բացում կազմակերպության համար. բավականին մեծ միջոցներ կազատվեն՝ աշխատողների որակավորման բարձրացման ծրագրեր և կրթական այլ միջոցառումներ ֆինանսավորելու, նորարական, ստեղծագործական մրցույթներ կազմակերպելու, մարզական միջոցառումների շարքն ընդլայնելու համար:

Կազմակերպության գործունեության նոր ընթացակարգի մշակման աշխատանքներով ներկայումս զբաղվում է կազմակերպության անձնակազմը, և առաջիկա համագումարին կներկայացվի պատվիրակների քննարկմանը:

Միասին կարող ենք հասնել ավելիին... ″

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Աշխատակիցների առողջության ապահովումը՝ առաջնահերթություն

«Զանգեզուր» ֆուտբոլային ակումբը՝ ուշադրության կենտրոնում

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Համագործակցության հասցե. Սյունիքի շախմատի ֆեդերացիա

Աջակցություն ուսումնական հաստատություններին

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Համագործակցության գնահատելի օրինակ

Արտյոմ Պետրոսյան
«Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ տնօրեն

«Էս ընդ Էյ Մայնինգ» ընկերությունը 2017 թվականից ի վեր համագործակցում է Կապանի լեռնահարստացման կոմբինատի հետ՝ հանդիսանալով վերջինիս լեռնահանքային արդյունաբերության ծառայություններ մատուցող հիմնական գործընկերը: Այդ փոխգործակցության շրջանակում 2023 թվականից ընկերությունն իրականացնում է «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող ստորգետնյա հանքավայրի հորատապայթեցման և հանքաքարի դուրսբերման համալիր աշխատանքները՝ մատուցելով նաև հանքարդյունաբերության ոլորտի այլ ծառայություններ:

Մեր համագործակցությունը պատվիրատուի հետ բնութագրվում է հետևյալ առանցքային ուղղություններով՝ երկրաբանահետախուզական աշխատանքների համակարգված իրականացում, աշխատանքային էթիկայի բարձր ստանդարտների համատեղ պահպանում, տեխնիկական լուծումների արդյունավետ ինտեգրում, ինչպես նաև աշխատանքային գործընթացների համաչափ ու սահուն կազմակերպում: Անհրաժեշտության դեպքում կողմերը պատրաստակամորեն լրացնում են միմյանց՝ ապահովելով բարձր կատարողականություն:

«Կապանի ԼՀԿ»-ն առանձնանում է որպես պատասխանատու ընդերքօգտագործող, որի առաջնահերթություններից են աշխատանքի անվտանգությունը, բնապահպանական ստանդարտների նկատմամբ առանձնահատուկ հետևողականությունն ու հաշվետվողական գործելակերպը: Ընկերության ներդրումը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև Հայաստանի հանքարդյունաբերության առաջխաղացման գործընթացում նույնպես գնահատանքի է արժանի:

Մենք բարձր ենք գնահատում Կապանի լեռնահարստացման կոմբինատի հետ ձևավորված գործընկերային փոխհարաբերությունները, որոնք նպաստում են համատեղ նախագծերի իրականացմանը: Լիահույս ենք, որ մեր արդյունավետ համագործակցությունը կունենա շարունակական զարգացում՝ հիմք հանդիսանալով նոր նախաձեռնությունների ու համատեղ երկարաժամկետ ծրագրերի համար: »

ՀԱՆՔԱՎԱՅՐԸ

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հետախուզման և պաշարների վերաբերյալ ամփոփագիր

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը շահագործվում է 1995թ-ից մինչ օրս՝ հետևյալ ձեռնարկությունների կողմից՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ (1995թ.-ից մինչև 15.07.2004թ. ընկած ժամանակահատված), «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» (16.07.2004-16.06.2013թ. ընկած ժամանակահատված), «Դանդի Փրիշս Մեթալս» (17.06.2013-24.04.2016թ. ընկած ժամանակահատված), Պոլիմետալ՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ (24.04.2016թ.-29.01.2019թ.), «Չաարատ Կապան» ՓԲԸ (սկսած 29.01.2019թ-06.10.2023թ) և «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ (06.10.2023թ.-ից):

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կոնդիցիայի պարամետրերը հաստատվել են 2008 թվականի մայիսի 16-ի թիվ 175 որոշմամբ, իսկ պաշարները հաստատվել են 2009 թվականի հուլիսի 29-ի թիվ 220 որոշմամբ:

Հանքավայրի գնահատման արդյունքում հաշվեկշռային պաշարները կազմել են՝

- C_1 կարգի համար՝ հանքաքար՝ 7390.6 հազ. տ,
- C_2 կարգի համար՝ հանքաքար՝ 10468.4 հազ. տ,
- Ընդամենը C_1+C_2 կարգերի համար՝ հանքաքար՝ 17859.0 հազ.տ:

Հազվագյուտ ու ցրված տարրերի պաշարները C_1+C_2 տարակարգերում կազմել են՝

կադմիում՝ 4422.23տ, ինդիում՝ 152.16տ, թելուր՝ 609.71տ, սելեն՝ 88.94տ, գալիում՝ 258.6տ, ծծումբ՝ 1269.78 հազ.տ, օգտակար բաղադրիչների միջին պարունակությունը համապատասխանաբար՝ 247.63գ/տ; 8.52 գ/տ; 34.14 գ/տ; 4.98 գ/տ; 14.48 գ/տ; 7.11%:

Ըստ 2008թ. պաշարների հաշվարկի՝ հանքավայրում հաստատված է 83 հանքային մարմին: 2008թ-ից առ այսօր արդյունահանմանը զուգահեռ իրականացվում է նաև մեծ ծավալներով շահագործական հետախուզում՝ ուղղված հանքային մարմինների եզրագծերի և պարունակությունների ճշգրտմանը: Ներկայումս ընկերությունը հասել է տարեկան պլանային 61600 գծամետր ցուցանիշի, որը գերազանցում է նախորդ տարիների պլանային ցուցանիշները, ինչը նպաստել է օգտակար հանածոյի ռացիոնալ արդյունահանմանը: Ներկայումս հանքավայրը գտնվում է պաշարների արմատական վերահաշվարկման փուլում 01.01.2024 թվականի դրությամբ, որի արդյունքում սպասվում է օգտակար հանածոյի հաստատված պաշարների զգալի հավելաճ:

Պաշարների վերահաշվարկին զուգահեռ ընկերությունը իրականացնում է նաև Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արևելյան թևի ուսումնասիրության աշխատանքներ, որոնց արդյունքում նախնական, հեղինակային պաշարները, տվյալ պահի դրությամբ, 19 հանքամարմնով կազմում են 3996,13 հազ.տ. հանքաքար:

Արևմտյան թևի համար իրականացվում է նախկինում կազմված երկրաբանահետախուզական ուսումնասիրության նախագծի լրամշակում: Համաձայն այս նախագծի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արևմտյան թևի 500-800մ հորիզոններում կանխատեսումային ռեսուրսները բաշխված են 33 հանքամարմինների և նախնական սպասվում է՝ հանքաքար- 3948,75 հազ. տ:

Կապանի հանքարդյունաբերության պատմություն

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

■ համառոտ ակնարկ

Հայ, ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, ամերիկացի, ռուս եւ այլ երկրների առաջատար մասնագետները, որոնք հնագիտական-երկրաբանական ուսումնասիրություններ են կատարել, հանգել են նույն կարծիքին, որ Կապանի հանքերից պղինձ ձուլվել է շատ վաղ անցյալում: Կատարված մասնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս նաեւ, որ Կապանի ապարները շատ ամուր են, եւ նախնադարյան եղանակներով կատարվող պղնձի արդյունահանումը մեծ դժվարությունների հետ էր կապված, այդ պատճառով կատարվում էր մեծ ընդմիջումներով եւ փոքր քանակով:

Զանգեզուրում, բացի պղնձից, կան մոլիբդենի, երկաթի, ոսկու, արծաթի, արճճի, կապարի, վոլֆրամի եւ այլ բնական օգտակար հանածոների պաշարներ, սակայն շահագործման դժվարությունների պատճառով բնակավայրի հիմնական շահագործումն իրականացվեց 19-րդ դարի կեսերից:

Երկրամասի հանքավայրերի մասին վկայություններ կան միջնադարի արաբական եւ պարսկական աղբյուրներում, հայ մատենագիրների մոտ: Կապանի պղնձահանքերի եւ մասնավոր գործատերերի մասին հիշատակում է 14-րդ դարի արաբ հեղինակ Ղազվինին: Հանքերի ու դրանց շահագործման մասին հիշատակում է նաեւ Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Հնագույն ժամանակներից բազմաթիվ հանքերի հետքեր են պահպանվել Սյունիքում՝ նաեւ ներկայիս օգտագործվող հանքերի տարածքում: Հին հունական արխիվներում տեղեկություններ կան, որ Ղաթարի, Կավարտի, Բաշքանդի, Գյումիշի մետաղից պատրաստել են սրեր, դաշույններ ու աղեղ, կարճ ու երկար նիզակներ, տեգեր, վահաններ, սաղավարտներ:

Շրջանը Հայաստանում խոշոր հանքային կենտրոն է եղել:

Կավարտի հունական եկեղեցի, Սուրբ Կատարինե (Խարալամբոս) եկեղեցի

Լուսանկարը՝ Նվեր Շեյայի

Սյունիքի հանքերի հնության մասին վկայում են նաեւ հանքավայրերում հանդիպած փորվածքները, գտնված հանքահորային սանդուղքները, քարացած փայտյա գործիքների մնացորդները:

Կապանի հանքերի մասին լեռնային ինժեներ Էռնի 1910թ. ուսումնասիրությունների համաձայն՝ Կապանի հանքավայրը կարող էր մեծ քանակությամբ պղնձի արտադրություն կազմակերպել միայն երկաթի յուրացումից հետո՝ մ.թ.ա. 5-7 դարերում: Մինչ այդ պղնձի արտադրությունը կատարվել է երկրի մակերեսին մոտ հարուստ շերտերից՝ քիչ քանակությամբ:

Նախնադարյան ժամանակներում պղինձը ձուլել են «Բարաբաթումի» կավահողից պատրաստած վառարաններում՝ փայտի վառելանյութով:

Այստեղ պղնձագործության հեռավոր անցյալի մասին են վկայում շրջանի տարբեր բնակավայրերում հայտնաբերված պղնձե ու բրնզե իրերը: Հայտնաբերված կաղապարները վկայում են մ.թ.ա. այստեղ եղած ձուլման գործի մասին:

Հին հուշագրերում պահպանվել է, որ Բարաբաթում գյուղի մոտ 1279-1290-ականներին գործել է բազմամետաղային հանք, որի հանքաբարի մեջ բարձր տոկոս էին կազմում ոսկին եւ արծաթը: Հանքը դարեր շարունակ կոչվում էր «Գյումիշ»: Դա այժմվա Շահումյանի հանքն է:

Պատմագրական հուշագրերում նշված է, որ Սյունիքի թագավորությունում 11-12–րդ դարերում կար դրամի առատություն, որը ստացվում էր ձուլված ոսկուց եւ արծաթից:

Կապանի հանքերում պղնձի արդյունահանումը նոր թափ է ստանում հայկական ազատագրական շարժման նոր ժանակաշրջանում: 1724թ. Ղարաբաղի մելիքների ներկայացուցիչ Իվան Կարապետը ռուս թագավորին գրում է, որ Սյունիքում կան հանքավայրեր, որտեղ հանքաբարի մեջ բարձր պարունակություն են կազմում պղինձը, արծաթը, ոսկին, արճիճը, ցինկը, որոնք բոլորը միասին են միեւնույն հանքում:

Ռուսական կայսրությունը մասնագիտական հանձնաժողովներ է գործուղում Կապան: Լայն թափ ստանալով՝ պղնձի արտադրությունը Կապանում դարձավ ռուս եւ եվրոպացի կապիտալիստների ուշադրության կենտրոնը:

19-րդ դարի 40-ական թվականներին Կապան եկավ գերմանացի նշանավոր երկրաբան Հերման Աբիխը: Առաջին անգամ նա մասնագիտորեն, գիտական հիմքով մանրամասնորեն ուսումնասիրեց Կապանի հանքերի հին փորվածքները: Նա գրել է, որ Յակով Ռոզովի հետ միասին Կապանում ուսումնասիրությունների ժամանակ Կավարտ գյուղից ոչ հեռու գտնվող Սայադաղ լեռան ստորոտում հայտնաբերել են 120-ից ավելի հին փորվածքներ (հանքեր): Նա Ռոզովի հետ պայմանավորվում է, որ Կապանում պետք է կառուցել պղնձաձուլարան՝ հանքաբարի հանույթը կազմակերպելու համար:

Հերման Աբիխ

Մելիք Ազարյան

1841թ. Կապան եկավ ԱՄՆ պղնձի տրեստի ներկայացուցիչ ինժեներ Ֆեբեյսը: Նա եռանդուն աշխատանք կատարեց այստեղ կոնցեռն կազմակերպելու ուղղությամբ, սակայն Սյունիքի մելիքները ցանկանում էին հանքերը տրամադրել ռուս չինովնիկներին:

1843 Ռոզովի հետ կրկին գալիս է Աբիխը: Նա 1843-1845 թվականներին Կապանից բացի երկրաբանական ուսումնասիրություններ է կատարել նաեւ Մեղրիում եւ Քաջարանում: Նրան անվանել են «Կովկասի երկրաբանության հայր»: Երկրաբանը նկարագրել է Կապանի, Մեղրու, Քաջարանի հանքավայրերը՝ ենթադրելով նաեւ Քաջարանում մոլիբդենի հանքանյութի առկայության մասին: Դա երկրամասի տարածքում մոլիբդենի գոյության մասին առաջին հիմնավորումն էր:

Երկրամասի հանքարդյունաբերության եւ կոմբինատների հիմնադրման պատմության մեջ շատ է կարեւորվում Յակով Ռոզովի (ռուս արդյունաբերող, Շուշվա բնակիչ) անունը: Բայց նա չի եղել Կապանի հանքերի ոչ հայտնագործողը, ոչ պիոները. մինչ նա էլ հանքերը գործել են, սակայն չունենալով հանքավայրերի մշակման համար միջոցներ եւ ունենալով ռուսական կողմնորոշում՝ տեղացիները Ռոզովին են զիջել իրենց իրավունքները: Նա 1846 թվականին թույլտվություն է ստանում կառուցել գործարան եւ շահագործել Կապանի հանքավայրը: Սակայն 1850-ին հանկարծամահ է լինում, եւ գործը՝ կիսատ:

Ռոզովի սկսած գործը շարունակեցին հույները՝ ուստա Ալավերդի Խարլամպի Կոնդուրովի գլխավորությամբ, որոնք 1850թ. Կավարտում, Բաշքանդում եւ Ղաթարում հանքեր բացեցին եւ կառուցեցին ձուլարան-գործարան:

1853 թվականին Խ.Կոնդուրովը կառուցեց Կավարտի պղծաձուլարանը, այն գործեց 10 տարի՝ աստիճանաբար մեծացնելով հզորությունը: Կոնդուրովներն ընթացքում բացում են ավելի հարուստ հանքեր, մի ձուլարանը չի բավականացնում եւ կառուցում են Հալիձորի ձուլարանը:

Նրանցից հետո Ագուլիսից եկած Խոջամիրյան եղբայրներն են Ղաթարում հանքեր վարձակալում, բացում եւ կառուցում Ղաթարի ձուլարանը: Սկսվում է մրցակցությունը, Կոնդուրովները կառուցում են 4-րդ գործարանը:

Մրցակցությունը խթանեց Կապանում պղնձի արդյունահանումը, այն դարձավ ցարական Ռուսաստանի պղնձի արտադրության նշանավոր կենտրոն: Պղինձն այստեղից արտահանում էին Ռուսաստան, Իրան, Վրաստան, Նախիջեւան, Թուրքիա, այնտեղից՝ եվրոպական երկրներ: 1860-ականներին Կոնդուրովը ձեռնամուխ է լինում նաեւ Բարաբաթումի հանքերի շահագործմանը, կառուցում Բարաբաթումի գործարանը:

Հետագա տարիներին նոր ձեռնարկատերեր են երեւան եկել՝ Լազարեւ եղբայրներ, Մուրադով, Մելիք-Փարսադանյաններ, Մելիք-Ղարագյոզյան, Աթաջանյան, «Կովկասյան ընկերություն» եւ այլն: Բացվեցին նոր հանքեր, գործարկվեցին նոր գործարաններ:

Խոջամիրյանները եւ Կոնդուրովները կառուցում են նոր՝ ավելի հզոր եւ նոր եղանակներով ձուլման գործարաններ՝ մեքենայացված աշխատանքով: Դա զարկ տվեց նաեւ հիդրոէներգետիկայի զարգացմանը, ձուլարանների կողքին նրանք հիդրոկայաններ կառուցեցին: Էլեկտրական էներգիայի օգտագործումը նոր թափով զարգացրեց պղնձարտադրությունը: Հանքատերերը սկսեցին կառուցել բնակելի շենքեր, հիվանդանոց եւ այլն, ըստ էության, սկսվեց կառուցվել նաեւ Կապան քաղաքը:

1897թ. Մելիք-Ազարյանը Ողջի գետի ձախ ափին՝ Բայդաղում կառուցեց նոր կատարելագործված գործարան, որը կոչվում էր «Սյունիքի գործարան»: Այստեղ հոսքագծեր էին աշխատում, կիրառվում էին պղնձի ձուլման նոր եղանակներ, եւ ստացված արտադրանքի ինքնարժեքը շատ ցածր էր: Շատ այլ հանքատերեր էլ սկսեցին իրենց պղինձը հալել այստեղ. Մելիք-Ազարյանը կառուցեց նաեւ հիդրոէլեկտրակայան, որն ավելի զարկ տվեց արդյունաբերությանը: Մանր հանքատերերը չդիմացան մրցակցությանը եւ իրենց արտադրանքը տալիս էին նրան: Ձուլարանը առաջինն էր Կապանում, որտեղ ձուլումը կատարվում էր շախտային եղանակով: 1900-ականներին գործարանն ամենախոշորն էր Հայաստանում, արտադրում էր Հայաստանում ձուլված պղնձի 50 տոկոսը (Կոնդուրովի հետ միասին՝ 60 տոկոսը):

20-րդ դարի սկզբում Կապանում գործում էին մոտ 16 մանր ու խոշոր արհեստանոց-գործարաններ:

1907թ. «Բիրժեւի վեդոմոստի» պարբերականը Կապանում աշխատող բանվորների թվի մասին նշում է՝ 5000:

Դատական, վարչական, մասնագիտական հարցեր լուծելու համար ստեղծվում է «Ղափանի հանքարդյունաբերողների ընկերությունը»: Ընկերության մշակած նախագծով Մելիք-Ազարյանները 1908-ին Կապանում կառուցում են առաջին հարստացուցիչ ֆաբրիկան: Ֆաբրիկայի խտանյութն ուղարկվում էր Սյունիքի ձուլարան: Աստիճանաբար աճում է հանքաքարի պահանջարկը, շահագործվում են նոր հանքեր:

«Ֆրանսիական կովկասյան արդյունաբերական եւ մետաղագործական ընկերությունը» 1910թ. գնում է Մելիք-Ազարյանի գործարանը եւ որոշ հանքեր: Հետագայում ֆրանսիացիները գնում են նաեւ մանր հանքատերերի հանքերը: Նրանց զուգահեռ աշխատում էին միայն Կոնդուրովներն ու Խոջամիրյանները:

Առաջին համաշխարհայինի նախօրեին Խոջամիրյանները նույնպես իրենց հանքաքարը հանձնում էին ֆրանսիացիներին, միայն Կոնդուրովներն էին պահում պղնձաձուլարան: Ֆրանսիացիները Կապան են ներմուծում հզորագույն տեխնիկա, մեխանիզմներ ու սարքավորումներ: Վերազինում են տեղի ողջ հանքարդյունաբերությունը: Ֆրանսիացիները նաեւ մեծ ուշադրություն էին դարձնում երկրաբանական-հետախուզական աշխատանքներին:

Կապանը աշխատուժ էր ձգում տարբեր տեղերից. հայերից բացի այստեղ աշխատում էին պարսիկներ, հույներ, վրացիներ, ադրբեջանցիներ, թաթարներ, մինչեւ անգամ՝ Եվրոպայից եկած բանվորներ: Պղնձի թողարկումն աճեց 15 անգամ, կառուցվեց նոր՝ ավելի հզոր պղնձաձուլարան՝ օժանդակ արտադրամասերով եւ հիդրոկայան:

Եթե 1890թ. Կապանի հանքերի բոլոր ձուլարանները միասին արտադրում էին 25.900 փութ պղինձ, ապա 1917՝ միայն ֆրանսիացիների կառուցած նոր ձուլարանը դրա կրկնապատիկը:

Տեխնոլոգական պրոցեսների կատարելագործման շնորհիվ հանքաքարից պղնձի կորզման ցուցանիշը 1913թ. 71 տոկոսի փոխարեն 1917-ին հասավ 90 տոկոսի: Կառուցվեց նոր հզոր դիզելային էլեկտրակայան, արտադրությունը գիտական հիմքի վրա դնելու համար՝ քիմիական լաբորատորիա:

1918թ. տարածաշրջանում սկսված կռիվները եւ արտադրության միջոցների ազգայնացումը խուճապի մատնեց սեփականատերերին, հեռացան ֆրանսիացիները, դրսից եկած այլ մանր հանքատերերը: Երկրամասում պատերազմական գործողությունները շարունակվեցին մինչեւ 1921-ը: Այդ ընթացքում ավերվեցին գործարանները, էլեկտրակայանները, արտադրական օբյեկտները, թալանվեց ամեն ինչ, հանքերը լցվեցին ջրով: Կապանից հեռացան այլ ազգության աշխատողները: Փաստորեն, 1918-ից Զանգեզուրում տնտեսությունը քայքայվեց:

1921թ. նախկին հանքարդյունաբերողների ընկերության նախագահ Սմբատ Մելիք-Ստեփանյանը, որն Ալեքսանդր Մյասնիկյանի կողմից նշանակված էր Ղափանի արտակարգ կոմիսար եւ լեռնային գործի տեսուչ, Ասքանազ Մռավյանի հանձնարարությամբ կազմում է հանքերի վերականգնման եւ զարգացման առաջին պլանը:

1924թ. Թբիլիսիից հանձնաժողով ժամանեց Կապան՝ ուսումնասիրություններ: Պղնձի պահանջարկը երկրում այնքան մեծ էր, որ դեռ հանքերը չվերականգնած, օգտագործելով 1917թ. հանքերի դռներին պահպանված հանքաքարի կույտերը, գործարանի բակում մնացած շլամը եւ խարամները՝ գործարկեցին ձուլարանը: Այդ շրջանում Խորհրդային Միությունում ոչ մի տոննա պղինձ չէր արտադրվում: Նոր կոմբինատը կոչեցին «Կարմիր նոյեմբեր»:

Սկսվեցին հանքերի վերականգնման աշխատանքները, վերանորոգվեցին ձուլարանը, հէկերը, գյուղերից հավաքվեցին ցիրուցան եղած նախկին աշխատողները: 1925թ. «Կարմիր նոյեմբեր» գործարանը երկրին տվեց առաջին պղինձը: Մինչ 1927-ը այն աշխատում էր իր կես հզորությամբ:

1930-ականներին ավարտվեց ֆրանսիացիների ժամանակ աշխատող հանքերի, ձուլարանների, էլեկտրակայանների եւ արտադրամասերի վերականգնումը: Կրկնապատվեց պղնձի ձուլումը:

1930-ից Կապանում սկսվեց նոր հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումը: Այն (նաեւ ստորգետնյա տրանսպորտային հանքուղին) շահագործման հանձնվեց 1935թ.:

1937թ. կառուցվեց Ալավերդու գործարանը, եւ փակվեց Կապանի ձուլարանը. հանքաքարը հարստացուցիչ ֆաբրիկայում հարստացնելուց հետո խտանյութն ուղարկվում էր Ալավերդի:

Իսկ 1968 թվականին Կապանում սկսեցին գործել նոր՝ ներկայիս հարստացուցիչ ֆաբրիկան, նորակառույց ստորգետնյա տրանսպորտային հանքուղին եւ մյուս ենթակառուցվածքները:

1977թ. ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրությունը որոշեց միավորել Ղափանի պղնձահանքային կոմբինատը եւ բարձր շահութաբերությամբ աշխատող Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը: Միացյալ ձեռնարկությունը կոչվեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ: Միավորումից հետո փաստորեն Ղափանը դարձավ Քաջարանի կոմբինատի ենթակայության արտադրական միավորում:

1988թ. միավորված կոմբինատները բաժանվեցին, Քաջարանի կոմբինատը կրեց նույն անունը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», իսկ Կապանինը՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատ:

2002թ. Կապանի լեռնահարստացման կոմբինատը մասնավորեցվեց՝ վաճառվելով շվեյցարական «Դենո» ընկերությանը:

2005-ին կոմբինատի սեփականատերը դարձավ «Վաթրին Ինվեստմենթ» անգլիական ընկերությունը:

2006-ից «Դինո գոլդ մայնինգ քամփնիի» 80 տոկոսի սեփականատերն է կանադական «Dandee Precious Metals» ընկերությունը:

2016 թ. ընկերության բաժնետոմսերը վաճառվել են ռուսական «Պոլիմետալ Ինթերնեյշնլ» խմբին:

2019 թ. ընկերությունը վաճառվեց «Չաարատ Գոլդ Ինթերնեյշնլ Լիմիթիդ» ընկերությանը:

2023 թ. ընկերության բաժնետոմսերը ձեռք բերեց հայաստանյան «Գոլդ մայնինգ քամփանի» ՍՊԸ-ն, և ընկերությունը կրկին անվանվեց «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ:

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը 19-րդ դարից մինչև մեր ժամանակներ. խրոնիկա

1823 - Գեներալ Մադաթովը գեներալ Երմոլովին գրում է Կապանի պղնձով հարուստ հանքային բնակավայրի մասին:

1835 - Կապան է գալիս գերմանացի նշանավոր երկրաբան Աբիխը և մանրամասն ուսումնասիրում Կապանի հանքերի հին փորվածքները:

1841 - Կապանի հանքերին, հին փորվածքներին ծանոթանալու համար Կապան եկավ ԱՄՆ-ի պղնձի տրեստի ներկայացուցիչ ինժեներ Ֆեյբեսը:

1846 - Ռուս չինովնիկ Յակով Ռոզովը թույլտվություն է ստանում և Կապանի հանքերին կից կառուցել պղնձաձուլարան: Ռոզովը համարվում է կոմբինատի հիմնադիրը, մահացավ 1950թ.:

1850 - Հույն պղնձագործ Կոնդուրովը կառուցեց Բաշքանդի պղնձաձուլարանը:

1860 - հիմնադրեց հունական թաղամասը (Բաշքանդ գյուղը):

1856 - Նախիջևանի Օրդուբադի մարզի Ակուլիս գյուղացի Խոջամիրյանները կառուցեցին Ղաթարի պղնձաձուլարանը:

1858 - Կոնդուրովները կառուցեցին Նոր Հալիձորի գործարանը /գիշերօթիկ դպրոցի տարածք/ 500 փութ պղնձի արտադրողականությամբ:

1861 - Հույները Բաշքանդում կառուցեցին հունական եկեղեցին: 1861թ. ջրհեղեղի ժամանակ ջուրը լցվում է Մեծ Մաղարա հանքը, լինում են մարդկային զոհեր:

1863 - Ջրհեղեղի հետևանքով ավերվեց Խոջամիրյանի Ղաթարի գործարանը, փոխարենը նա ավելի հզոր գործարան կառուցեց Կապան քաղաքում, գետի ձախ ափին, Կավարտ գետի հատման տեղը: Նույն 1863թ. Կոնդուրովը գետի աջ ափին, Վաչագան գետի հատման մասում կառուցեց իր հզոր պղնձաձուլարանը և այն Վաչագան գետի այն ժամանակվա անունով կոչվեց Ուգուրչայի գործարան: Կոնդուրովն ու Խոջամիրյանը իրենց գործարաններին կից կառուցեցին էլեկտրակայաններ:

1879 - Կապանում բնակվող ծնունդով շուշեցի նշանավոր արդյունաբերող Մելիք-Ազարյանը կառուցեց Սյունիքի պղնձաձուլարանը, որին կից էլ անմիջապես կառուցեց իր էլեկտրակայանը:

1900 - Կառուցվեց Գորիս-Ղափան խճուղային ճանապարհը և շահագործման հանձնվեց 1904 թվականին:

1904 - Բացվեց փոստի առաջին բաժանմունքը և այն կոչվեց Ղաթարի հանքերի փոստի բաժանմունք:

1907 - Սյունիքի գործարանում կազմակերպվեց առաջին բոլշևիկյան բջիջը: Գործադուլ հայտարարեցին Ղափանի հանքերի ու պղնձաձուլական գործարանների բոլոր բանվորները: Գործադուլը տևեց մարտի 26-ից 29-ը, այն ավարտվեց բանվորների հաղթանակով:

1908 - Մելիք-Ազարյանները Կապանում կառուցեցին առաջին հարստացուցիչ ֆաբրիկան:

Առաջին անգամ հեռախոսակապ է տեղադրել Սմբատ Մելիք-Ստեփանյանը՝

մեկը իր բնակարանում, մյուսը՝ հանքում և մեկ էլ իր էլեկտրակայանում:

1909 - Հույն բանվորները մայովկա կազմակերպեցին հունական թաղամասում /Բաշքանդ/:

1911 - Ֆրանսիացիները Կապանի հանքերում ծավալում են լայնամասշտաբ շահագործման աշխատանքներ, կառուցում են խոշոր պղնձաձուլական գործարան: Գործարանին էլեկտրաէներգիա մատակարարելու համար սկսեցին Ջրախոր հիդրոէլեկտրակայանի շինարարության աշխատանքները, որի կառուցումը միանգամից մեծ մասշտաբով ավելացրեց էլեկտրաէներգիայի արտադրությունը:

- Ֆրանսիական հանքարդյունաբերողների նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ Ղաթարի փոստի բաժանմունքում տեղադրվեց Մորզեի առաջին հեռագրական ապարատը, որի շնորհիվ հանքարդյունաբերողներն ու ղափանցիները հեռագրական կապ հաստատեցին արտաքին աշխարհի հետ: Այդ ժամանակվանից էլ բաժանմունքը վերանվանվեց Ղաթարի հանքերի փոստ-հեռագրական բաժանմունք, բոլոր ծախսերը կատարում էին հանքարդյունաբերողները:

1917 - Հայաստանում պատերազմական վիճակի և Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության պատճառով փակվեցին Կապանի հանքերը, դադարեցին բոլոր տեսակի աշխատանքները: Հանքերը լցվեցին ջրով, պղնձաձուլարաններն ու հիդրոէլեկտրակայաններն ավերվեցին: Փակվեց Ղաթարի փոստի բաժանմունքը:

1922 - Հայաստանում պատերազմական գործողություններն ավարտվելուց հետո Իտալիան, Գերմանիան, Ֆրանսիան, Կոնդուրով եղբայրները Հայաստանի կառավարությունից թույլտվություն խնդրեցին Կապանի հանքերը աշխատեցնելու համար: Նրանց խնդրանքը մերժվեց, Հայաստանը ցանկանում էր ինքնուրույն վերականգնել հանքերի աշխատանքը:

1924 - Ալեքսանդր Մյասնիկյանի հանձնարարությամբ լեռնային ինժեներ Չարապովի ղեկավարությամբ ինքնաթիռով հանձնաժողով ժամանեց Կապան, որի ուսումնասիրություններից հետո սկսվեցին Կապանի հանքերի վերականգնման աշխատանքները:

1925 - Սկսեց աշխատել պղնձաձուլական գործարանը: Աստիճանաբար սկսեցին վերականգնել հանքերը:

1926 - Կապան այցելեց և ստորգետնյա հանքերում եղավ նշանավոր գրող ու հրապարակախոս Մարիետա Շահինյանը, վերադառնալով Մոսկվայի ու Լենինգրադի ամսագրերում հոդվածներ տպագրեց Կապանի լեռնագործների մասին:

1927 - Առանց ավտոխճուղու Չանգելանի տարածքով առաջին ավտոմեքենան մուտք գործեց Կապան, որի վարորդը Յակով Նիկիտիչ Պետրովն էր: Նա երկար տարիներ աշխատեց կոմբինատի գլխավոր մեխանիկ:

1930 - Ավարտվեցին կոմբինատի նախկին գործող հանքերի, պղնձաձուլական գործարանի, Ջրախորի հիդրոէլեկտրակայանի և մյուս արտադրամասերի վերականգնման և գործարկման աշխատանքները:

1931 - Սկսվեց կոմբինատի վերակառուցման հարստացուցիչ ֆաբրիկայի, ստորգետնյա տրանսպորտային հանքուղու և մի շարք արտադրական, բնակարանային, կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարությունը:

1932 - Ավարտվեց Մինջևան-Կապան երկաթուղու շինարարությունը, և գնացքը մուտք գործեց Կապանի երկաթուղային կայարան:

1935 - Շահագործման հանձնվեց հարստացուցիչ ֆաբրիկան և ստորգետնյա տրանսպորտային հանքուղին:

- Օգոստոսի 31-ին Դոնեցկի հանքափոր Ալեքսեյ Ստախանովը բարձր արտադրողական աշխատանքային սխրանք կատարեց, որով սկիզբ առավ ստախանովական հզոր շարժումը: Հայաստանում Ալեքսեյ Ստախանովի օրինակով առաջինը սկսել են աշխատել Ղափանի հանքվարչության լեռնագործները:

– Շահագործման հանձնվեց Ղափանի օդանավակայանը:

– ՀՍՍՀ կենտգործկոմի նոյեմբերի 28-ի թիվ 21 որոշմամբ, ձուլարանի գլխավոր վարպետ Կոստյա Պլիևը,

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Միհեր Մկրտչյանը հանքագործների հետ

Լենհանքերի ստախանովական հանքափոր Մինաս Պապյանը, Կոմերիտմիության անվան հանքի վարիչ Ավետիս Փիրյանը արժանացան հանրապետության Աշխատանքային հերոսի կոչման:

1936 - Կապան քաղաքի կենտրոնում շահագործման հանձնվեց այն ժամանակվա համար խոշոր, բարեկարգ բանվորական ակումբի շենքը:

1937 - Փակվեց ֆրանսիացիների կառուցած պղնձաձուլարանը, դրանից հետո կոմբինատը տեղում պղինձ չէր ձուլում:

1941 - 1945 - Հայրենական մեծ պատերազմի տարիներ:

1946 - Կոմբինատում տեղադրվեց առաջին 200 տեղանոց հեռախոսակայանը, որը սպասարկում էր Ղափան քաղաքին:

- Նոյեմբերի 16-ին նշվեց Կապանի հանքավարչության աշխատանքային գործունեության 100-ամյակը:

1962 - Սկսվեց նոր կոմբինատի շինարարությունը:

- Գարնանը Ղափանում և Քաջարանում եղավ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Անաստաս Իվանի Միկոյանը:

- Սկսվեց նոր, հզոր, ներկայումս գործող հարստացուցիչ ֆաբրիկայի ու տրանսպորտային հանքուղու տնտեսության վերակառուցումը:

1965 - Շահագործման հանձնվեց Երևան-Ղափան մարդատար գնացքը:

1967 - Շահագործման հանձնվեց Չանախչի-Ղափան ջրատարը:

1968 - Ավարտվեց կոմբինատի նոր հզորությունների կառուցումը և այն հանձնվեց շահագործման:

1971 - Սկսեց գործել ՅԱԿ-40 ինքնաթիռը Երևան-Ղափան ուղղությամբ:

1977 - ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրության 1977թ. ապրիլի 4-ի N-72 հրամանի համաձայն՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի և Ղափանի պղնձահանքային կոմբինատի միավորումից կազմավորվեց Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը:

- Ղափանում շահագործման հանձնվեց լեռնագործների նորակառույց մշակույթի կենտրոնը:

1981 - Գունավոր մետալուրգիայի նախարարության հուլիսի 1-ի թիվ 65 հրամանի համաձայն՝ Ղափանի հանքավարչությունը վերանվանվեց Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Վ. Ի. Լենինի անվան հանքը նորից վերանվանվեց Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Ղափանի հանքավարչություն:

1988 - ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրության 1988 թվականի մայիսի 8-ի N- 300 հրամանով միավորված կոմբինատները բաժանվեցին՝ Քաջարանի կոմբինատը կրեց նույն անունը՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», իսկ Ղափանը կոչվեց «Կապանի լեռնահարստացման կոմբինատ»:

2002 - Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N-1859 Ա որոշմամբ կոմբինատը սեփականաշնորհվեց շվեյցարական «Դենո» ֆիրմայի կողմից: ■

1948թ. հոկտեմբերի 5-7-ը աշխարհահռչակ Արամ Խաչատրյանը եղավ Ղափանի հանքերում, ֆլոտացիոն գործարանում

1900-ականների լուսանկարներ. Կապանի հանքերում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության կառավարման խորհրդի նախագահ Սասուն Ավետիսյանի ուղերձը Հանքագործի և մետալուրգի օրվա առթիվ

4 «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության տնօրենությունը

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ

6 Կապանի գլխավոր և մայր ձեռնարկությունը՝ զարգացման ու արդիականացման ճանապարհով (հարցազրույց «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Դանիելյանի հետ)

9 Կապանի լեռնահարստացման կոմբինատը եղել և մնում է Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության դպրոցը (հարցազրույց «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ Հարություն Թամազյանի հետ)

13 Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայր. լուսանկարային դրվագներ

15 Արտադրության տեխնիկական վերազինումը՝ հաջողության գրավական

16 «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ խոշոր հարկ վճարողների շարքում (Հերմինե Խաչատրյան, գլխավոր հաշվապահ)

17 Բազմաթիվ օրինակելի աշխատակիցներից մի քանի դեմքեր

ԿՈՄԲԻՆԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՂԱԿՆԵՐԸ. ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

20 Սամվել Ղազարյան, հարստացուցիչ ֆաբրիկայի պետ

22 Առնակ Բաբայան, գլխավոր ճարտարագետի տեղակալ, ստորգետնյա հանքի պատասխանատու

23 Տիգրան Հովհաննիսյան, գլխավոր երկրաբան

24 Գարիկ Թումանյան, գլխավոր մարկշեյդեր

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

25 Կայուն զարգացման նոր փուլում. Կապանի ԼՀԿ-ն համայնքի ու մարդկանց կողքին (ներկայացնում է «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի կայուն զարգացման հարցերով տեղակալ Հովհաննես Հարությունյանը)

27 Աշխատանքի և արտադրական անվտանգության քաղաքականություն (Էդգար Մարտիրոսյան, աշխատանքի և անվտանգության բաժնի պետ)

28 Բնապահպանությունը՝ ընկերության առաջնահերթություն (Աիդա Ալեքսանյան, բնապահպանության բաժնի պետ)

29 Մարդկային ռեսուրսները՝ ընկերության ամենաթանկ կապիտալ (Մարիաննա Հովհաննիսյան, կադրերի բաժնի պետ)

30 Իրավաբանական բաժինը՝ ընկերության իրավական անվտանգության երաշխավոր (Նարինե Հովհաննիսյան, գլխավոր իրավաբան)

31 «Սյունյաց լեռնագործներ» արհեստակցական կազմակերպությունը (Արամայիս Մարտիրոսյան, ԱԿ նախագահ)

32 Աշխատակիցների առողջության ապահովումը՝ առաջնահերթություն. լուսանկարներ

32 «Զանգեզուր» ֆուտբոլային ակումբը՝ ուշադրության կենտրոնում. լուսանկարներ

33 Համագործակցության հասցե. Սյունիքի շախմատի ֆեդերացիա. լուսանկարներ

33 Աջակցություն ուսումնական հաստատություններին. լուսանկարներ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

34 Համագործակցության գնահատելի օրինակ (Արտյոմ Պետրոսյան, «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ տնօրեն)

ՀԱՆՔԱՎԱՅՐԸ

35 Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հետախուզման և պաշարների վերաբերյալ ամփոփագիր

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

36 Կապանի հանքարդյունաբերության պատմություն. համառոտ ակնարկ

39 Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը 19-րդ դարից մինչև մեր ժամանակներ. խրոնիկա

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Գրանցման վկայական՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 5.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1500: Ստորագրված է տպագրության 03.07.2025թ.:



Կապանատո՛ւն իմ, ամենից առաջ՝ հոգուս շքերթն ես,
Իմ խորունկ շերտն ես, ինձ պահող հենքն ես,
Ծնող մորս պես՝ իմ թաք ու կենտն ես, իմ կենսակերպն ես...
Իմ մեջքին՝ թիկունք, անառիկ բերդն ես,
Իմ Խուստուփ լեռն ես, իմ Ողջի գետն ես,
Իմ Դավիթ Բեկն ես, իմ Բաղաբերդն ես,
Նաև՝ ինձ զգոն, հաստատուն պահող այն խորունկ վերքն ես,
Որից ամրանում, առաջ են մղվում. դու իմ վերելքն ես...

ՄԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ



Լուսանկարը՝ Հայկ Բարսեղյանի

Աներկբա՛ իմ սեր, լեռ իմ վեհանիստ.
Ինձ պահող հավատ, իմ հզոր խարիսխ...